ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ Թ-ԺԱ ԴԱՐԵՐՈՒՄ. ԳՈՒՆԴ ԵՒ ԳՈՒՄԱՐՏԱԿ

Կարինէ Ոսկանեան

Բազրատունեաց Հայաստանի բանակի կառուցուածքը պարզաբանելու եւ հիմնական գծերով վերականգնելու համար անհրաժեշտ է հետազօտել հայկական միջնադարեան սկզբնաղբիւրների՝ ռազմական ստորաբաժանումներին վերաբերող վկայութիւնները, մարտական միաւորներից իւրաքանչիւրի յիշատակման ձեւերը, ստորաբաժանումների տեղը եւ դերը պետութեան ռազմական ուժերի շարքում: Հայոց բանակի կառուցուածքի հետ կապուած որոշ հարցերի պարզաբանմանը նպաստում են հարեւան՝ պարսկական, բիւզանդական, արաբական եւ սելջուկ-թիւրքական բանակների մասին հայ հեղինակների երկերում պահպանուած տեղեկութիւնները: Յայտնի է, որ Բիւզանդական կայսրութիւնը եւ Արաբական խալիֆայութիւնը ունեցել են կայացած ռազմական կառոյցներ՝ իրենց բաղկացուցիչ ստորաբաժանումներով: Հայկական սկզբնաղբիւրներում այդ երկրների բանակների կառուցուածքային միաւորները յիշատակւում են հայկական բանակի ստորաբաժանումների անուանումներով: Հայ պատմիչները, լինելով հոգեւորականներ, ռազմական բնագաւառի բառապաշարին բաւարար չափով չեն տիրապետել, հանգամանօրէն ծանօթ չեն եղել բիւզանդական կամ արաբական բանակի ստորաբաժանումներին, դրանց անուանումներին, որի հետեւանքով հակառակորդների ռազմական ուժերը ներկայացրել են հայկական բանակի միաւորների համապատասխանութիւններով: Այս հանգամանքը կարող է լրացուցիչ փաստեր տրամադրել՝ որոշ դիտարկումներ ու կռահումներ կատարելու համար:

Հայոց բանակի կառուցուածքի ամբողջական եւ ճշգրիտ պատկերը բացայայտելու գլխաւոր խոչընդոտը ստորաբաժանումները բնութագրող տերմինների՝ տարբեր իմաստներով գործածումն է: Առաւել յաճախ դրանք ուղղակի արտայայտում են խումբ, քանակութիւն իմաստները: Ռազմական բնագաւառին վերաբերող յիշատակութիւնների մի մասում ռազմական միաւորների անուանումները երբեմն բնութագրում են ամբողջ զօրքը, մասամբ հանդէս են գալիս որպէս մեծ թուաքանակ ունեցող ստորաբաժանումների անուանումներ, այլ վկայութիւններում ցոյց են տալիս մարտական փոքր միաւորներ: Մեր խնդիրն է՝ առկայ տուեալները համադրելու եւ վերլուծելու միջոցով պարզաբանել ստորաբաժանումների հնարաւոր թուաքանակը, մօտաւոր մեծութիւնը եւ կշիռը բանակում:

Բազրատունեաց Հայաստանի բանակային ստորաբաժանումների համակարգում կարեւոր տեղ էր զբաղեցնում գումարտակը[1]*: Ժամանակաշրջանի պատմիչներից այս տերմինն առաջինը յիշատակում է Յովհաննէս Դրասխանակերտցին: Գումարտակի վերաբերեալ Դրասխանակերտցու վկայութիւնները պայմանականօրէն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում գումարտակը խորհրդանշում է ամբողջ բանակը, զօրքը եւ հանդէս է գալիս իբրեւ բանակի ամենամեծ ստորաբաժանում՝ բաղկացած աւելի փոքր միաւորներից: Վկայութիւնների երկրորդ խմբում գումարտակը որպէս թուաքանակով փոքր ստորաբաժանում է հանդէս գալիս: Դա երեւում է ինչպէս հայկական, այնպէս էլ հարեւան երկրների բանակների ռազմական ստորաբաժանումները գումարտակ տերմինով բնորոշելու դէպքերից:*

Հայաստանի հին շրջանի եւ վաղ միջնադարի պատմութիւնը շարադրելիս Դրասխանակերտցին մի քանի տեղ գործածում է գումարտակ տերմինը: Տիգրան Միջինի կառավարման ժամանակաշրջանի պատմութիւնը շարադրելիս հեղինակը նշում է, որ հայոց արքան գումարտակ է կազմում յոյների դէմ եւ, պարտութեան մատնելով նրանց, ստիպում է նահանջել. «Սա (Տիգրան Միջինը - Կ. Ո.) գումարտակ բազում ընդդէմ Յունականացն՝ ի վերայ եկելոցն նորա, կազմեալ՝ ի վերջ կոյս զնոսա նահանջէր»[2]*: Յովհաննէս Դրասխանակերտցին Միհրդատ Պոնտացու մասին նշում է, որ չնայած վերջինս գումարտակ է պատրաստում եւ բազում մարտեր է մղում, սակայն պարտութիւն է կրում հռոմէական զօրավար Պոմպէոսից. «Յայնժամ ապա եւ Պոմպէոս Հռօմայեցի գայ հասանէ ի վերայ Միհրդատայ. որ թէպէտեւ ահագին մարտս ընդդէմ նորա գումարտակ դնէր եւ սակայն յաղթեալ ի բազմութենէն՝ փախստական ի կողմանս Պոնտոսի անկանէր»*[3]*: Վերը նշուած իրադարձութիւնները Դրասխանակերտցին շարադրել է՝ հիմք ընդունելով Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւն» աշխատութեան այն հատուածը, որտեղ Պատմահայրը խօսում է Տիգրան Միջինի*[4] *կառավարման եւ գործունէութեան մասին: Տիգրանի ռազմական ուժերը Խորենացին բնութագրում է որպէս հայոց զօրք. «Եւ ժողովեալ զզօրս հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց...»*[5]*, Միհրդատի մասին հատուածում Խորենացին նկարագրում է Պոմպէոսին ցոյց տրուած յամառ դիմադրութիւնը. «Իսկ Պոմպէի պատերազմեալ ընդ Միհրդատայ՝ տեսանէ սաստիկ ընդդիմակցութիւն եւ ահագին մարտս, եւ վտանգի յոյժ, սակայն բազմութեանն յաղթեալ՝ փախստական լինի Միհրդատ ի կողմանս Պոնտոսի»*[6]*: Ինչպէս տեսնում ենք,*

---

1 *Գումարտակը* իրանական ծագում ունի, սերում է gumārtak (gumārtakihā) բառից եւ հայերէնում ռազմական ասպարէզում նշանակել է «զօրքի գումար, բանակ, ճակատ» (տե՛ս **Հր. Աճառեան,** *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, Երեւան, 1971; **А. Г. Периханян**, *Сасанидский судебник*, Ер., 1973, с. 481): Արդէն Ե դարի պատմագրութեան մէջ գումարտակը յիշատակւում է որպէս հայոց բանակի ստորաբաժանում: Այն հանդիպում է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ, սակայն նրա վկայութիւններից պարզ չէ, թէ գումարտակը ի՞նչ մեծութեան միաւոր էր (**Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, www.digilib.am. այսուհետեւ տրուող բնագրային բոլոր յղումները www.digilib.am կայքից

են): Փաւստոս Բուզանդը մի վկայութիւն ունի Խոսրով Գ Կոտակի (330-338) ժամանակաշրջանի վերաբերեալ, որտեղ նշում է, որ արքան միացնում է բոլոր աւագ նախարարական տների զօրաջոկատները արքունի զօրքի հետ եւ ամբողջ *գումարտակը* դնում է սպարապետ Վաչէ Մամիկոնեանի ու Վահան Ամատունու հրամանատարութեան տակ. «Գումարէր զզօրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, եւ տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա» (տե՛ս **Փաւստոս Բուզանդ**, *Բուզանդարան պատմութիւնք*, www.digilib.am): Եթէ հիմնուենք Փաւստոսի այս վկայութեան վրայ, ապա կարող ենք ասել, որ գումարտակը մեծ միաւոր էր, այն իր մէջ ներառում էր արքունական եւ նախարարական զօրքերը:

2 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, *Պատմութիւն Հայոց*, www.digilib.am:

3 Նոյն տեղում:

4 Խորենացու յիշատակած Տիգրան Միջինը Տիգրան Բ-ն է, որի ժամանակաշրջանը Պատմահայրը նկարագրում է չափաւոր ձեւով, իսկ նրա գործունէութեան որոշ դրուագներ վերագրում է Տիգրան Երուանդեանին (Ք. ա. Զ դար), տե՛ս **Մ. Աբեղեան**, *Երկեր*, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 308. **Գ. Սարգսեան**, *Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը*, Երեւան, 1965, էջ 75, 83-84. նոյնի, *Պատմագիտական հետազօտութիւններ*, Երեւան, 2006, էջ 13:

5 **Մովսէս Խորենացի**:

6 Նոյն տեղում:

© National Library of Armenia

Խորենացին գումարտակ բառը այս հատուածներում չի գործածում, ինչը նշանակում է, որ Դրասխանակերտցին ինքն է ներմուծել այդ տերմինը[7]:

Արաբական նուաճումների ժամանակաշրջանը նկարագրելիս Դրասխանակերտցին բիւզանդական բանակի պարտութեան պատճառ է համարում արաբական զօրքի՝ գումարտակի ստուարաթիւ լինելը. «Արդ իբրեւ գումարտակ մեծ լինէր Հագարացին՝ եւ յաղթեալ կոտորէին առհասարակ զզօրս կայսեր Հերակլի որ յԱրաբիայ...»[8]: Բիւզանդական Կոստանդ կայսեր (642-668)՝ դէպի Հայաստան արշաւանքը նկարագրելիս[9] Դրասխանակերտցին բիւզանդական զօրքը նշում է գումարտակ տերմինով. «Իսկ կայսեր զօրս բազումս գումարտակ արարեալ՝ չուէ գնայ ի Հայս ընդ իւրեւ նուաճել»[10]: Ըստ Սեբէոսի, որի վկայութիւններն էլ ընկած են Դրասխանակերտցու հաղորդումների հիմքում, բիւզանդական կայսրը յարձակուել է Հայաստանի վրայ 100,000 զօրքով. «Յայնժամ արքայ Կոստանդին հաւանեցաւ առնել զկամս զաւրացն: Եւ առ զզաւրս իւր եւ գնաց ի Հայս ճ հազարաւ»[11]: Ժամանելով Կարին՝ կայսրը, իր հետ վերցնելով 20,000 զօրք շարժւում է դէպի Այրարատ նահանգ. «եւ ինքն գնաց յԱյրարատ ի հազարաւ»[12]: Դժուար է ասել, թէ Դրասխանակերտցին գումարտակ տերմինը այս երկու թուաքանակներից որի համար է գործածել: Պարզ է, որ երկու դէպքում էլ, նաեւ՝ վերը նշուած միւս վկայութիւններում, գումարտակը խորհրդանշում է զօրքի մեծ քանակութիւն: Այստեղ եւս նկատելի է Դրասխանակերտցու համոզուածութիւնը իր գործածած տերմինի հիմնաւորուածութեան հարցում:

Գումարտակ տերմինը ռազմական ստորաբաժանման կամ ուղղակի բանակ իմաստով հանդիպում է «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում[13]: Պատմիչն այս տերմինը գործածում է բիւզանդական եւ պարսկական բանակները բնութագրելիս: Վկայութիւններից մէկը վերաբերում է պարսկա-բիւզանդական պատերազմներին, երբ պարսից արքայ Խոսրով Բ-ի (590-628) կողմից Դամասկոսի եւ Երուսաղէմի գրաւման անպատուութիւնը վերացնելու համար բիւզանդական կայսր Հերակլը (610-641) զօրահաւաք է յայտարարում[14], եւ ամբողջ զօրքը հաւաքւում է մի վայրում. «Զի յանկարծակի ազդ արարեալ կայսերն ամենայն զօրավարաց եւ զօրագլխաց իւրոց զյաջողելն Աստուծոյ առաջի նորա, հրամայէր վաղվաղակի ի մի վայր գումարել հանդերձ ամենայն զօրութեամբ, որ ընդ ձեռամբ իւրեանց եւ լսելի լինէր ամենեցուն ժամադիր գումարտակին այնորիկ»[15]: Բիւզանդական ողջ բանակը պատմիչն անուանում է «գումարտակ»: Յամիչն անուանում է «գումարտակ»: Յաջորդ վկայութիւններում գումարտակի մօտաւոր թուաքանակը ենթադրել դժուար է: Մի դէպքը վերաբերում է պարսից զօրավար Շահր-Վարազի կողմից բիւզանդական քաղաքների պաշտպանութեան գործը պաղեստինեան եւ բիւզանդական գումարտակներին յանձնելուն. «Եւ թողեալ ի տակներին յանձնելուն. «Եւ թողեալ ի տակներին յանձնելուն. «Եւ թողեալ ի տ

նախընթաց պատմութեանը, գումարտակ տերմինը ռազմական մեծ ուժի իմաստ է արտայայտում:

Բագրատունեաց բանակին վերաբերող վկայութիւններում գումարտակը արդէն հանդէս է գալիս որպէս ստորաբաժանում: Հայոց բանակի կազմում Դրասխանակերտցին գումարտակը յիշատակում է Սմբատ Ա-ի (890-914) կառավարման ժամանակաշրջանից սկսած: Իր հօրեղբայր, սպարապետ Աբասի դէմ գահի շուրջ ծաւալուած պայքարի ընթացքում Սմբատը զօրքի մեծ գումարտակ է պատրաստում եւ յարձակւում է Աբասի տիրոյթների վրայ. «Ապա այնուհետեւ Սմբատայ զօր մեծ գումարտակ արարեալ»[18]: Միջագետքի տիրակալ Ահմադ Շայբանու ոտնձգութիւնները կասեցնելու նպատակով Սմբատ Ա-ն նախարարների զօրքից գումարտակ է կազմում եւ, ամբողջ զօրքը միաւորելով, 60,000 հազարանոց բանակով ընդառաջ է գնում Ահմադին. «Այնուհետեւ գումարտակ արարեալ արքայի զնախարարս Հայոց եւ համագունդ զամենայն զօրս իւր արս իբրեւ վաթսուն հազար եւ գնայ չուէ երթայ հասանէ մինչ ի հանդէպ լերինն ըստ արեւելից Տարօնոյ»[19]:

Մինչեւ պետականութեան վերականգնումը Հայաստանի ռազմական ուժը կազմում էին նախարարների զօրքերը, որոնք սկզբնաղբիւրներում յիշատակւում են գունդ տերմինով[20]: Հետեւաբար, նախարարներից գումարտակ կազմելը նշանակում էր գնդերից գումարտակ կազմել, այսինքն՝ գումարտակը չէր կարող փոքր միաւոր լինել, եթէ միաւորում էր տարբեր նախարարների գնդերը: Մանաւանդ որ այս վկայութեան մէջ զօրքի թիւը բաւականին մեծ է՝ 60,000: Միւս կարեւոր պահը, որ յուշում է գումարտակի՝ ստորաբաժանում լինելու մասին, այն է, որ թագաւորը ամբողջ զօրքը միաւորում եւ արշաւանքի է մեկնում նախարարների զօրքերից կայուն միաւոր ստեղծելուց յետոյ:

Ատրպատականի ամիրա Իւսուֆի արշաւանքի ժամանակ Սմբատ Ա-ն մեծ զօրք է հաւաքում եւ Արագած լեռան լանջերին գումարտակ է կազմում. «Իսկ արքայ... գումարտակ չինէր ի քաղաքագիւղն Արուճ ի ծործորս Արագած լերինն»[21]: Այստեղ նոյնպէս Սմբատ Ա-ի կազմած գումարտակի թուաքանակը պատմիչը չի նշում, սակայն ուշագրաւ է մի հանգամանք. Իւսուֆը, իմանալով հայոց բանակի մարտական բարձր պատրաստուածութեան մասին, հրաժարւում է ռազմական ընդհարումից եւ խաղաղութիւն է հաստատում հայոց թագաւորի հետ: Ստեփանոս Տարօնեցին այս դէպքերի մասին գրում է, որ Սմբատը սաստիկ զօրութեամբ հասնում է Իւսուֆի ետեւից, որը զարհուրելով հաշտութիւն է խնդրում. «Զոր գիտացեալ Սմբատայ՝ զօրօք բազմօք պահէ զանցս նորա: Եւ նորա գողօրէն գնացեալ ընդ լեառն բարձանց՝ ի Շիրակ անկանի եւ ի Դուին չուէ. եւ զհետ հասեալ Սմբատայ սաստիկ զօրութեամբ՝ եւ զարհուրեալ Իւսուփ խնդրէ զխաղաղութիւն եւ կրկին պսակեալ

18 Յովհաննէս Դրասխանակերտցի:

19 Նոյն տեղում:

20 Յովհաննէս Դրասխանակերտցին Ը դարի հայկական ռազմական ուժերի մասին խօսելիս նախարարների զօրքը նշում է *հեծելազօր գնդեր* ձեւով. «ի մի վայր գումարէին զազատս եւ զհեծելազօր գունդս», (տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի): Ղեւոնդը եւս նախարարների զօրքերը անուանում է գնդեր. «Եւ ժողովեալ զգունդս իւրեանց իբրեւ արս եռ» (տե՛ս Ղեւոնդ, *Պատմութիւն*, www.digilib.am): Սեբէոսը բազմիցս յիշատակում է Հայաստանի նախարարներին, որոնք իրենց գնդերով շտապում էին զօրք տրամադրել պարսից թագաւորին. «Եւ այսորիկ են նախարարք եւ զաւրք, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք եւ դրաւշու ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու» (տե՛ս Սեբէոս):

21 Յովհաննէս Դրասխանակերտցի:

զՍմբատ բազում ընչիւք՝ գնայ ի Պարսս»[22]:

Գումարտակի՝ մեծ միաւոր լինելու մասին են վկայում Դրասխանակերտցու այն տեղեկութիւնները, որտեղ գումարտակը խորհրդանշում է մեծ ստորաբաժանում, իսկ նրա կազմում յիշատակւում են գնդերը: Ատրպատականի ամիրա Իւսուֆը 909 թ. արշաւանք է ձեռնարկում դէպի Հայաստան՝ մեծաթիւ զօրքով գումարտակ կազմելով. «...Ապա ոստիկանն գումարտակ զօրու բազմի կազմեալ՝ չուեալ խաղայ գայ հասանէ յաշխարհ մեր»[23]: Հայաստան գալուց եւ մի շարք իշխանների իր կողմը գրաւելուց յետոյ, Իւսուֆը գնդեր է կազմում եւ ուղարկում է Սմբատ Ա-ի դէմ. «...Ապա ոստիկանն գունդս զօրաց բազմաց պատրաստեալ հրոսակս արքային Սմբատայ եւ տայ ի ձեռս թագաւորին Գագկայ եւ յայլ եւս իւրոց նախարարացն եւ գաղտակծութեամբ առաքէ դաւոս ի վերայ նորա...»[24]: Բիւրականի ամրոցը գրաւելու համար արաբները զօրք են առանձնացնում եւ գումարտակ են կազմում. «Եւ զօր բազում գումարտակ արարեալ եւ զի պատրաստագոյնս զինքեանս կալ կազմեսցեն»[25]: Մի քանի տող ներքեւ, ամրոցի պաշարումը նկարագրելիս, արաբական զօրքի կազմում նշում են հեծելազօր գունդ եւ հետեւակ զօրքի լեգէոն զօր գունդ եւ բնութագրումները. «Եւ ապա ասպարփակ լեալ շուրջանակի լեգէոն հետեւակ զօրուն եւ թիկնապահ նոցա լեալ հեծելազօր վառելոյ գնդին ի մէջ անցելոյ՝ այնուհետեւ շահատակէին գաղտնաբար ի վերայ յարձակեալք»[26]: Ամբողջ զօրքը յիշատակւում է որպէս զօրքի գումարտակ, իսկ զօրքի մէջ նշւում է գնդերի եւ լեգէոնի առկայութիւնը, ինչը վկայում է, որ գունդը եւ լեգէոնը գումարտակ ստորաբաժանման մէջ էին մտնում: Այս միտքը հաստատում է մէկ այլ վկայութիւն. Աշոտ Բ Երկաթի (914-928) դէմ ապստամբութեան ժամանակ Սահակ Սեւադա իշխանը զօրքերի գումարտակ է հաւաքագրում, որը կազմուած էր հետեւակ եւ հեծելազօր գնդերից. «Եւ զայս ասացեալ՝ գումարտակ զբոլոր զօրսն իւր առնէր աւելի քան զութ հազար արանց. եւ յառաջ կոյս մղեալ եւ հանդէպ բլրակին հորդան տուեալ եւ յորոյ վերայ կայր թագաւորն՝ հրամայէր հետեւակամարտ գնդին վահանափակ լինել եւ որ տեսութիւն իմն բերէր յինքն որպէս զանպարտելի պարիսպ. եւ ի թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդն պատրաստէր»[27]:

Վերը մէջբերուած վկայութիւններից երեւում է, որ գումարտակը կազմուած էր տարբեր զօրատեսակներից, հեծեալ եւ հետեւակ գնդերից, ինչպէս նաեւ աւելի փոքր ստորաբաժանումներից՝ լեգէոններից:

Հայոց բանակի կազմում գումարտակ ստորաբաժանումը յիշատակւում է նաեւ Աբաս թագաւորի (928-953) օրօք: Ըստ Ստեփանոս Տարօնեցու՝ աբխազների յարձակման լուրը ստանալով, Աբաս թագաւորը հայոց այրուձիից գումարտակ է կազմում. «Եւ զայս պատգամ լուեալ թագաւորին Աբասայ՝ գումարտակ զօրաց արարեալ այրուձիոյն Հայոց»[28]: Ստեփանոս Տարօնեցին այլ հատուածում նշում է զօրքերից գունդ առանձնացնելու մասին. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ...»[29]: Այս հատուածից պարզ երեւում է, որ հայոց զօրքի կազմում գնդեր կային, որոնցից առանձնացուել է մէկը:

22 Ստեփանոս Տարօնեցի, *Պատմութիւն տիեզերական*, www.digilib.am:

23 Նոյն տեղում:

24 Յովհաննէս Դրասխանակերտցի:

25 Նոյն տեղում:

26 Նոյն տեղում:

27 Նոյն տեղում:

28 Ստեփանոս Տարօնեցի:

29 Նոյն տեղում:

© National Library of Armenia

Գումարտակի մասին վկայութիւնը այս առումով անորոշ է, ինչը հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, որ գումարտակը կազմուել էր ամբողջ այրուձիից: Մանաւանդ որ Տարօնեցին ռազմական տերմինները, ստորաբաժանումների անուանումները գործածում է խիստ ընտրողաբար, փոխաբերական իմաստով տերմինների օգտագործման դէպքեր նրա աշխատութեան մէջ չենք հանդիպում:

Ինչպէս ցոյց են տալիս վերը բերուած վկայութիւնները, գումարտակը Հայոց բանակի ստորաբաժանում էր, բայց այն հաստատուն թուաքանակ չունէր[30]: Ցամենայն դէպս, նման տուեալներ չունենք, ընդամէնը կարող ենք ասել, որ գումարտակը Հայոց բանակի ամենամեծ ստորաբաժանումն էր, քանի որ նրա կազմում յիշատակւում են Հայոց բանակի միւս ստորաբաժանումները՝ գունդը, լեգէոնը: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ միջնադարեան բանակներում գործում էր տասնորդական բաժանումը, որտեղ ամենամեծ ստորաբաժանումը 10,000-ն էր[31], կարելի է ենթադրել, որ գումարտակը նոյնպէս մօտաւորապէս այդ թուաքանակի զօրք է պարունակել: Ինչ վերաբերում է Սմբատ Ա-ի՝ նախարարների զօրքերից 60,000-անոց բանակի գումարտակ կազմելուն, ապա հնարաւոր է, որ այստեղ մէկից աւելի գումարտակներ են կազմուել:

Դրասխանակերտցու վկայութիւնների երկրորդ խմբում գումարտակը խորհրդանշում է քանակական առումով փոքր ստորաբաժանում: Դա երեւում է յատկապէս Հայաստանի նախարարութիւնների կամ առանձին շրջանների ռազմական ուժերի վերաբերեալ յիշատակութիւններից: Սիւնիքի ռազմական ուժերը բնութագրելու համար Դրասխանակերտցին օգտագործում է ինչպէս գունդ, այնպէս էլ գումարտակ տերմինները: Այսպէս, Թ դարի կէսերին, Սիւնեաց իշխանների միջեւ զինուած պայքարը նկարագրելու առիթով, կողմերի ռազմական ուժերը նշում է գումարտակ տերմինով. «Եւ գումարտակ ի վերայ իրեարաց կարգեալ ի պատերազմ, սպանանի ա-

30 Միջնադարի ռազմական կազմակերպութեանը բնորոշ էր բանակի թուաքանակի փոփոխական լինելը, ինչը պայմանաւորուած էր ժամանակաշրջանի հասարակական եւ քաղաքական առանձնայատկութիւններով: Միջնադարեան բանակներում ուշադրութիւնը կենտրոնացւում էր աւելի շատ զինուորականների որակի վրայ: Կապուած զօրքի հաւաքագրման առանձնայատկութիւնների հետ՝ բանակները, այդ թւում՝ նրանց ստորաբաժանումները կայուն թուաքանակ չունէին (**А. А. Свечин**, *Эволюция военного искусства*,. том I, militera.lib.ru/science/svechin2a/index.html; *История военного искусства*, том I, под ред. П. А. Ротмистрова, Москва, 1963, с. 64):

31 Բանակի կազմակերպման տասնորդական (десятичная система) համակարգը որոշ փոփոխութիւններով գործել է իրանական բանակում աքեմենեան, պարթեւական եւ սասանեան շրջաններում: Ամենամեծ միաւորը գունդն էր՝ բաղկացած 10,000 զինուորից, հրամանատարը՝ bairapati. գունդը կազմուած էր հազարեակներից, որոնց հրամանատարները կոչւում էին hazarapati: Հազարեակները իրենց հերթին բաժանւում էին հարիւրակների՝ հրամանատարը՝ thatapati եւ վաշտերի՝ wašt բաղկացած տասը զինուորից, dathapati-ի հրամանատարութեամբ (տե՛ս Encyclopédia Iranica, vol. II, p. 492, 498): Զօրքի բաժանման այս ձեւը ընդունուած է եղել նաեւ արաբական բանակում, որտեղ ռազմական ամենախոշոր միաւորը 10,000-ն էր, այն բաղկացած էր 10 ռազմական միաւորներից՝ իւրաքանչիւրում 1000 զինուոր, որն էլ բաժանւում էր հարիւրակների առանձին հրամանատարներով, իւրաքանչիւր հարիւրեակ բաժանւում էր երկու յիսնեակների: Ամենափոքր միաւորը տասնեակն էր (տե՛ս **Е. Разин**, *История военного искусства*, т. II, Москва, 1957, с. 116): Տասնորդական համակարգը հետագայում կիրառել են մոնղոլները: Նրանց բանակում ամենախոշոր միաւորը 10,000-ն էր եւ կոչւում էր *թումեն* (tma): Բաժանւում էր հազարեակների (մինգան), հարիւրեակների (յաուն) եւ տասնեակների (ասբա), որոնց գլուխ կանգնած էին տասնապետերը, հարիւրապետերը, հազարապետերը, բիւրապետերը (տե՛ս **Джованни дель Плано Карпини**, *История монголов*, Москва, 2008, ст. 260, **Е. Разин**, ук. соч., с. 207):

պա Սուփանն ի Բաբգէնայ»[32]: Սիւնեաց զօրքերի մասին խօսելիս Դրասխանակերտցին մէկ այլ տեղում գործածում է գումարտակ բառի յոգնակի ձեւը: Ատրպատականի ամիրա Իւսուֆի յարձակմանը դիմագրաւելու եւ իրենց ընտանիքի անդամներին գերութիւնից ազատելու համար Սիւնեաց իշխաններ Սմբատը եւ Սահակը չեն կարողանում արագ զօրք հաւաքագրել. «Ոչ կարացեալ վաղվաղակի գումարտակս զօրաց կազմել»[33]: Որոշ ժամանակ անց նրանց յաջողւում է զօրք հաւաքագրել, գումարտակներ կազմել եւ ետ մղել արաբների յարձակումը. «Եւ գումարտակս սփռեալ՝ արեանց ճապաղիս հեղուին»[34]: Թովմայ Արծրունու մի վկայութեան մէջ յիշատակւում է Սիւնեաց գահերէց իշխան Սմբատի[35] 10,000-ի հասնող զօրքը[36]:

Այս խմբի վկայութիւնները ուսումնասիրելիս ուշադրութիւն է գրաւում հետեւեալ հանգամանքը: Դրասխանակերտցին գումարտակ տերմինը գործածում է մարտնչող այն կողմի զօրքը բնութագրելու համար, որն աւելի մեծաթիւ է հակառակորդի համեմատութեամբ եւ մարտուակ է: Այս հատուածներում Դրասխանակ է: Այս հատուածներում Դրասխանակերտցին չի կարեւորում զօրքի քանակութիւնը, այլ էական նշանակութիւն է տալիս հակառակորդի նկատմամբ առաւելուլիս հակառակորդի նկատմամբ առաւելութեանը, ռազմական պատրաստուածութեանը:

Աշոտ Բ-ի կառավարման շրջանում ընդհանուր բանակի կազմում գումարտակ ստորաբաժանման յիշատակման ընդամէնը մի դէպք է հանդիպում, եւ այս փաստը հնարաւոր է բացատրել ժամանակաշրջանի իրադրութեամբ: Քանի որ Սմբատ Ա-ի օրօք 60,000-ի հասած բանակը քայքայուել էր, Աշոտ Բ-ի հրամանատարութեան տակ մնացել էին փոքրաթիւ ուժեր, որոնք Դրասխանակերտցին նշում է գունդ տերմինով, կամ սակաւաթիւ զինուորներին ուղղակի անուանում է այրեր: Պատմիչն Աշոտ Բ-ի զօրքը գումարտակ տերմինով յիշատակում է միայն սպարապետ Աշոտ Շապուհեանի դէմ ծաւալուած պայքարի առիթով: Պարզւում է, որ Աշոտ Բ-ին զօրք էր տրամադրել իր աներ Սահակ Սեւադա իշխանը, ինչպէս նաեւ արաբական հեծեալ մի գունդ էր ուղարկել ոստիկան Իւսուֆը. «Առաքէ նմա (Աշոտ Բ-ին - Կ. Ո.) ոստիկանն Իւսուֆ ... հեծեալս յօգնականութիւն նմա գունդ իսմայելեան... առեալ ապա եւս ընդ իւր զզօրս իշխանին Սահակայ աներոյ իւրոյ... եւ գումարտակ զօրս ապա սփռեալ տարածանէին ի մարտ»[37]:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այս շրջանում գումարտակ տերմինով Դրասխանակերտցին բնորոշում է նաեւ Աշոտ Բ-ի դէմ ապստամբած նախարարների եւ կառավարիչների զօրքերը, որոնք Աշոտ Բ-ի զօրքերի նկատմամբ թուական գերակշռութիւն ունէին եւ մարտական առումով աւելի պատրաստուած էին: Ցլիկ Ամրամի ապստամբութեան ժամանակ Աշոտ Բ-ի զօրքը Դրասխանակերտցին նշում է «սպայակոյտ գունդ»[38] ձեւով, իսկ ապս-

32 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 42: Ստեփանոս Օրբէլեանը նոյն դէպքերի մասին պատմելիս գործածում է *գումարտակ* տերմինը (տե՛ս **Ստեփանոս Օրբէլեան**, *Պատմութիւն նահանգին Սիսական*, www.digilib.am):

33 Յովհաննէս Դրասխանակերտցի:

34 Նոյն տեղում:

35 Թովմայ Արծրունու յիշատակած դէպքերի ժամանակ Սիւնեաց գահերէց իշխանն էր Սմբատի մանակ Սիւնեաց գահերէց իշխանն էր Սմբատի մանակ Սիւնոտը (տե՛ս **Հ. Ութմազեան**, *Սիւնիքը IX-հայր Աշոտը X դարերում*, Երեւան, 1958, էջ 99-100):

36 **Թովմայ Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, www.digilib.am:

37 Յովհաննէս Դրասխանակերտցի:

38 Դրասխանակերտցին յաճախակի է գործածում *սպայ* տերմինը եւ այդ արմատով կազմուած բառեր՝ *սպայազօրք, սպայակոյտ*: Վերը նշուած իրադարձութիւնների ընդհանուր նկարագրութեան մէջ պատմիչը նշում է, որ Աշոտ Բ-ի զօրքը հեծելազօր էր, ինչը վկայում է այն մասին, որ *սպայակոյտ զօրք* արտայայտութեամբ Դրաս-

© National Library of Armenia

տամբների զօրքը անուանում է «գումարտակ». «Այլ Ամրամն այն՝ Ցլիկն յորջորջեալ եւ ընդ նմա այլ եւս ապստամբ սրիկայքն զօր բազում յօգնականութիւն իւրեանց յամենայն ուստեք գումարտակ արարեալ՝ որջացեալ ամրացեալ կային ի մէջ անտառախիտ մայրեացն առ ափն Կուր գետոյ»[39]: Դրասխանակերտցին նշում է, որ Աշոտ Բ-ին չի յաջողւում ճակատամարտ տալ թշնամու դէմ, սակայն չի մանրամասնում, թէ ինչու: Կարող ենք միայն ենթադրել, որ պատճառներից մէկը կարող էր լինել նրա գնդի փոքրաթուութիւնը, եւ հակառակորդի գումարտակի մեծութիւնը, քանի որ Դրասխանակերտցին այս դէպքերի հետ կապուած նշում է, որ գրեթէ բոլոր նախարարները երես էին թեքել Աշոտ Բ-ից, եւ նա Եգերաց թագաւորից է օգնական զօրք վերցնում, որը աչքի չէր ընկնում բարձր մարտունակութեամբ:

Աշոտ Բ-ի դէմ Ուտիքի կառավարիչ Մովսէսի ապստամբութեան ժամանակ ապստամբների զօրքերը Դրասխանակերտցին յիշատակում է գումարտակ տերմինով. «Իսկ Մովսիսի տեսեալ զբազմութիւն զօրացն տարմաբար հորդան տուեալ ի վերայ նորա՝ ապա եւ նա գումարտակ մեծ առնէ յանդուգն եւ անճոռնի զօրաց»[40]: Տաշիրի Սամշուիլդէ (Շամշուլդէ) ամրոցի վերակացուներ Աշոտ եւ Վասակ Գնթունիները ապստամբում են Աշոտ Բ-ի դէմ եւ գաղտնի գումարտակ են պատրաստում՝ բաղկացած աւելի քան 4000 զինուորից. «Իսկ գումարտակ զզօրս իւրեանց առնէին ծածկաբար... ընդ ինքեան ունելով եւ զսիրելիսն իւրեանց յանբոկ գործոյն սպայազօրսն Տփխեաց եւ զծործորոցն Կովկասու եւ իբրեւ արանց աւելի քան զչորեքհազարաց»[41]: Այստեղ Աշոտ Բ-ի 200-250 զինուորները անուանուած են «այրեր». «եւ ինքն ապա վայելուչ եղբարբն Աբասաւ եւ երկերիւր յիսուն արամբք երթեալ առկայացեալ դարէր դադարէր մերձ յամրոցն՝ որ կոչէր Սակուրէթ»[42]:

Արաբ զօրավար Բեշիրի զօրքը, որ նախատեսուած էր Աշոտ Բ-ին պարտութեան մատնելու համար, նշուած է գումարտակ տերմինով. «Իսկ Բշրն այն եւ որ յետ ընդ կրունկն թողաւ՝ ժողով սպայակոյտ զօրու բազմի գումարտակ արարեալ»[43]: Մի քանի տող անց, Գէորգ իշխանի դէմ ճակատամարտի հետ կապուած, Դրասխանակերտցին նշում է, որ Բեշիրը 1000 զինուոր ունէր. «Իսկ Բշրն ի դիմի նմա հարեալ յեղակարծումն ժամու՝ իսկոյն առնոյր Գէորգն զահ երկիւղի եւ զի ոչ աւելի քան քսան այր ընդ նմա էին եւ Բշրայն իբր զհազար այր»[44]:

Ինչպէս տեսնում ենք, երկրորդ խմբի վկայութիւններում գումարտակը 1000-4000 զինուոր ընդգրկող ստորաբաժանում է: Դրասխանակերտցու աշխատութեան մանրակրկիտ ուսումնասիրութիւնից երեւում է, որ գունդը նրա մօտ հանդէս է գալիս իբրեւ աւելի փոքր ստորաբաժանում,

---

խանակերտցին նկատի է ունեցել հեծեալ զօրքը: Մի քանի այլ վկայութիւններում եւս հեծեալ զօրքը պատմիչը յիշատակում է *սպայակոյտ զօրք* արտայայտութեամբ. «Եւ իբրեւ օդապարիկ իմն սրավար երիվարս պատրաստեալ՝ յեղակարծումն ժամու զմէջ գիշերաւն հեծեալ հատեալ ընդ մէջ սպայակոյտ զօրուն անցեալ գնաց», «եւ ապա միամարտեալ ընդ սպայակոյտ զօրուն» (տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**): Սակայն Դրասխանակերտցին հետեւակ զօրքը նոյնպէս բնութագրում է *սպայ* տերմինով. «Եւ առաջապահքն առաջի վահանափակ սպային սրավար երիվարօք խաղացեալ՝ յասկոյս այնկոյս երթային գային» (տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**), ինչը նշանակում է, որ *սպայն* արտայայտել է ե՛ւ զօրք, ե՛ւ հետեւակ զօրք, ե՛ւ հեծելազօր իմաստները:

39 **Յովհաննէս Դրասխանակերտցի**:

40 Նոյն տեղում:

41 Նոյն տեղում:

42 Նոյն տեղում:

43 Նոյն տեղում:

44 Նոյն տեղում:

քան գումարտակը (ինչպէս ցոյց կը տանք ստորեւ, նա 200 կամ 1000 զինուորներից բաղկացած խումբը անուանում է գունդ), իսկ գումարտակը Դրասխանակերտցին նշում է միայն այն դէպքերում, երբ խօսքը վերաբերում է, ըստ իրեն, մեծաթիւ զօրքին, յատկապէս երբ հակառակորդի ռազմական ուժի նկատմամբ թուական գերակշռութիւնը չափազանց մեծ է: Բեշիրի 1000 զինուորի դիմաց Գէորգ իշխանը ունէր 20 զինուոր, Աշոտ եւ Վասակ Գնթունիների 4000 զինուորի դիմաց Աշոտ Բ-ի տրամադրութեան տակ կար 200-250 զինուոր:

Պէտք է նշենք, որ գումարտակ տերմինը գործածում է Գրիգոր Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» պոէմում: Նարեկացու ստեղծագործութիւններում ռազմական բնագաւառի հետ կապուած մէջբերումները, նկարագրութիւնները բաւականին յաճախակի են հանդիպում, ինչը նշանակում է, որ նա ծանօթ է եղել այդ ոլորտին եւ իր ստեղծագործութիւններում արտացոլել է իր ապրած ժամանակաշրջանում գոյութիւն ունեցած տերմինները: Իհարկէ, Նարեկացին տերմինները օգտագործում է հանդերձ, զուտ քանակութիւն արտայայտելու իմաստով գումարտակը նրա մօտ աւելի մեծ միաւոր է, քան գունդը[45]:

Ուշադրութեան են արժանի գումարտակի ստեղծման ընթացքը բնութագրող բայերը՝ առնել, շինել, կազմել, դնել. դրանց մէջ գերակշռում է «գումարտակ արարեալ» ձեւը: Առնել բառը մի քանի իմաստ ունի՝ ստեղծել, կազմել, կերտել, շինել, «գոյատորել յոչնչէ», «ձեւացուցանել»[46]: Այդ բառով ռազմական ստորաբաժանման կազմակերպումը բնութագրելը վկայում է, որ գումարտակը միանգամից չէր կազմւում. դա որոշակի ջանքեր, ռազմական տաղանդ եւ ժամանակ էր պահանջում:

Գունդը միջնադարեան հայոց պատմագրութեան մէջ ամենաշատը յիշատակուող ռազմական տերմինն է[47]: Մովսէս Խորենացին, հայոց Վաղարշակ թագաւորին վերագրելով զինուորական կարգուկանոնի սահմանումը, նշում է, որ Վաղարշակը չորս պահապան գունդ է նշանակել՝ իւրաքանչիւրը բաղկացած բիւր (10,000) սպառազէն զինուորներից. «Եւ գունդս եւ պահապանս դրան արքունի կարգէ զչորս զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք»[48]: Ընդունուած տեսակէտի համաձայն՝ գունդը, որպէս բանակի ստորաբաժանում, իրանական ռազմական կազմակերպութեան ազդեցութեամբ է ներթափանցել Հայաստան: Ն. Ադոնցը հիմնաւորում է այն տեսակէտը, որ Պարսկաստանում գոյութիւն են ունեցել զօրականներ, որոնք կոչուել են gundjāigāh կամ ramm: Դրանցում տեղակայուել են գնդեր, եւ ամբողջ պետութեան տարածքում եղել է չորս կամ հինգ այդպիսի զօրական: Նրա կարծիքով՝ Խորենացու մօտ յիշատակուող սահմանային զօրավարութիւնները՝ չորս պահապան գնդերը, եւ բանակը չորս մասի բաժանելու գաղափարը իրանական կառոյցների ազդեցութեամբ են ստեղծուել, եւ իրականում հայկական բանակում այդպիսի բաժանում չի եղել[49]: Սակայն այս տեսակէտը համոզիչ չէ: Ա. Դանիէլեանը ցոյց է տուել, որ Տրդատ Գ-ն (298-330) ստեղծել է կանոնաւոր զօրք

---

45 **Գրիգոր Նարեկացի**, *Մատեան ողբերգութեան*, Երեւան, 1985, էջ 269, 552, 588:

46 *Նոր Բառգիրք հայկազեան լեզուի*, հտ. Ա, Երեւան, 1979, էջ 308: **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, էջ 261-262:

47 Գունդը ծագել է պահլաւերէն gund բառից եւ հայերէնում ունեցել է *խումբ, դաս, մարդկանց բազմութիւն, զինուորների խումբ, բանակ* իմաստները (տե՛ս **Հր. Աճառեան**, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Ա, էջ 595):

48 **Մովսես Խորենացի**:

49 Տե՛ս **Ն. Ադոնց**, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, Երեւան, 1987, էջ 263, 314-317:

© National Library of Armenia

երկրի արեւելեան, արեւմտեան, հիւսիսային եւ հարաւային սահմաններում եւ վերակառուցել է արքունական բանակը[50]:

Գունդ տերմինի լիարժէք ուսումնասիրութեան նպատակով նախ եւ առաջ պէտք է բացայայտել այդ ստորաբաժանման տեղը Հայաստանի ռազմական կառոյցում մինչեւ պետականութեան վերականգնումը: Այնուհետեւ անհրաժեշտ է ճշտել հարցերի հետեւեալ խումբը. պետականութեան վերականգնման շրջանում արդեօք նկատուեցի՞ն գնդի կազմի ու թուաքանակի հետ կապուած փոփոխութիւններ, եթէ այո, ապա ինչպիսի՞ փոփոխութիւններ էին դրանք եւ ի՞նչ ազդեցութիւն թողեցին հայոց բանակի կառուցուածքի վրայ:

Բագրատունեաց Հայաստանին նախորդող ժամանակաշրջանի գնդի վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում Սեբէոսը: Նա գունդը յիշատակում է որպէս բանակի առանձին միաւոր, ներկայացնում է զօրահանդէսի ժամանակ զօրքի դասաւորումը ըստ գնդերի. «ԶՅովհաննն Պատրիկ ի Հայոց կողմանէ, եւ զՆերսէս ստրատելատ յասորւոց եւ զզաւրս նոցա. անցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշից իւրեանց»[51]: Հարիւրակների, հազարեակների եւ գնդերի առանձին յիշատակումը հիմք է տալիս ենթադրելու, որ գունդը կարող էր իր մէջ ներառել հարիւրակներ եւ հազարեակներ:

Մաւրիկիոս (Մօրիկ) կայսեր (582-602) կողմից պարսից Խոսրով Բ թագաւորին օգնութիւն ուղարկելու համար Հայաստանից եւս զօրք է հաւաքագրւում. «Եւ զզաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն առ ձեռն գտեալ. եւ անցեալք ի հանդիսի իբրեւ հազարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշոց իւրեանց»[52]: Այս վկայութեան մէջ նախարարների գնդերի առանձին յիշատակումը եւ զօրահանդէսի ժամանակ դրանց վերադասաւորումը ըստ հարիւրակների, հազարեակների եւ գնդերի ցոյց է տալիս, որ նախարարների գնդերը եւ զօրահանդէսի ժամանակ պատրաստուող գնդերը միեւնոյն միաւորները չէին, եւ պատմիչը տարբերակում է նախարարական գունդ հասկացութիւնը գունդ ռազմական ստորաբաժանումից: Աշխատութեան յաջորդ հատուածներում Սեբէոսը գունդ տերմինը գործածում է եւ՛ ռազմական միաւորի իմաստով, եւ՛ նախարարներից իւրաքանչիւրի զօրքը բնութագրելու համար: Բազմաթիւ վկայութիւններում Սեբէոսը նշում է պատերազմներից առաջ գնդերի ստեղծումը հայկական, բիւզանդական եւ պարսկական բանակներում: Բիւզանդական կայսր Հերակլ Ա-ն (610-641) արաբների յարձակմանը դիմագրաւելու համար գնդեր է կազմում. «Եւ սկսաւ գունդս գնդեր է կազմում. «Եւ սկսաւ գունդս կազմել իբրեւ ՀՌ (70,000) եւ ետ նոցա զաւրավար՝ զոմն մի ի հաւատարիմ ներքինեաց իւրոց, եւ հրաման ետ երթալ նոցա յԱրաբիայ»[53]: Մէկ այլ տեղում Պարսկաստանից ժամանած հարկահաւաքը, հայ նախարարների զօրքերը միաւորելով, գնդեր է կազմում. «Եւ ժողովեալ համարակարին զամենայն իշխանս եւ զզաւրս Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝ ողոքաւ եւ եւս քաղցր բանիւք յորդորեալ զամենեսեան միաբանեաց, արար գունդս»[54]:

Մօրիկը հրամայում է Հայաստանում զօրահաւաք կազմակերպել, զօրք հաւաքագրել եւ գնդեր կազմել. «Եւ հրաման ետ դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով եւ ընտրով հասակի. կազմել գունդս զարդու եւ զինու վառեալ եւ անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ Թշնամւոյն»[55]: Արաբների դէմ Պարսկաստանում բռնկուած ապստամբութեան պատմութիւնը աւանդելիս Սեբէոսը նշում է, որ զօրք են հաւաքագրում եւ գնդեր կազմում. «Եւ սկսան զմնացեալ մարդիկն զաւրս ժողովել, եւ գունդս կազմել»[56]: Այս գնդերի կողքին տեսնում ենք հայ նախարարների զօրքը, որը նոյնպէս նշւում է գունդ տերմինով. «Եւ այսոքիկ են նախարարք եւ զաւրք, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք եւ դրաւշու ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա: Առաջին՝ Գագիկ Մամիկոնեան որդի Մանուէլի. երկրորդն՝ Պապ Բագրատունի որդի Աշոտայ ասպետի. երրորդն՝ Խոսրով Վահեւունեաց տէր. չորրորդն՝ Վարդն Արծրունի. հինգերորդն՝ Մամակ Մամիկոնեան. վեցերորդն՝ Ստեփանոս Սիւնի. եւթներորդն՝ Կոտիտ Ամատունեաց տէր, եւ այլք ընդ նոսա ի նախարարաց»[57]:

Սմբատ Բագրատունին (Խոսրով Շում) պարսից թագաւոր Խոսրով Բ-ի յանձնարարութեամբ քուշանների դէմ արշաւանքի մեկնելիս իր հետ տանում է Հայաստանի զօրքը, որտեղ յիշատակւում են նախարարների գնդերը. «Եւ այս են իշխանք նախարարացն Հայոց, որ ընդ նմա իւրաքանչիւր գնդաւ եւ դրաւշու. Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտաւազդ եւ Վստամ եւ Հմայեակ Ապահունի, Մանուէլ Ապահունեաց տէր, Վռամ Գողթնեաց տէր, Սարգիս Դիմաքսեան, Սարգիս Տրպատունի, եւ այլք ի նախարարացն: Եւ զաւրք նորա իբրեւ երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն»[58]: Վերջին վկայութեան մէջ Հայաստանից Պարսկաստան մեկնած ընդհանուր զօրքի թուաքանակը 2000 էր[59], իսկ

---

50 Տե՛ս **Ա. Դանիէլեան**, *Տրդատ III-ի զինուորական ռեֆորմը*,- ՊԲՀ, 1974, թիւ 4, էջ 209, 213-214:

51 **Սեբէոս**:

52 **Սեբէոս**: Ն. Ադոնցը կարծում է, որ Սեբէոսի վկայութեան այս հատուածում «ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց» արտայայտութիւնը բնութագրում է նախարարներին՝ ըստ իրենց տիրոյթներից դուրս բերած զօրքի քանակի (տե՛ս **Ն. Ադոնց**, նշ. աշխ., էջ 321), որը, սակայն, հաւատի չէ մի քանի պատճառով: Նախ՝ նոյն հատուածում Սեբէոսը նշում է զօրքի բաժանումը հարիւրաւորների եւ հազարաւորների՝ առանց կարեւորելու գնդերի՝ նախարարներին պատկանելու հանգամանքը. «ԶՅովհաննն Պատրիկ ի Հայոց կողմանէ, եւ զՆերսէս ստրատելատ յԱսորւոց եւ զզաւրս նոցա. անցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշից իւրեանց»: Բացի այդ՝ Սեբէոսը վերը նշուած հատուածներում նկարագրում է զօրահանդէսը, որի ընթացքում, սովորաբար, զօրքը դասաւորւում էր ըստ ռազմական ստորաբաժանումների: Միւս կողմից՝ Սեբէոսը նախարարներին, ըստ իրենց զօրքի քանակութեան տարբերակելիս, այլ կերպ է կառուցում շարադրանքը. «Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարեւմուտս զաւրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց. եւ մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բիւրաւորաց» (տե՛ս **Սեբէոս**):

53 **Սեբէոս**:

54 Նոյն տեղում:

55 Նոյն տեղում:

56 Նոյն տեղում:

57 Նոյն տեղում:

58 Նոյն տեղում:

59 Սեբէոսի աշխատութեան աշխարհաբար թարգմանութեան հեղինակները այս հատուածի թարգմանութեան մէջ 2000-անոց զօրքը վերագրում են Սմբատին. «Նաեւ իր զօրքը աշխարհից՝ շուրջ երկու հազար հեծեալ» (տե՛ս **Սեբէոս**, *Պատմութիւն*, արեւելահայերէն թարգմ. առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Գ. Խաչատրեանի եւ Վ. Եղիազարեանի, Երեւան, 2005, էջ 123): Մինչդեռ պէտք է լինի «Եւ նրա զօրքը աշխարհից՝ շուրջ երկու հազար հեծեալ»: *Աշխարհ* բառով պատմիչը նկատի է ունեցել Հայաստանը: Նոյն դէպքերի հետ կապուած, մի քանի տող վերեւ, պատմիչը նշում է, որ Սմբատը կանչում է իր զօրքը. «...*Եւ կոչէ առ ինքն (Սմբատ Բագրատունին - Կ. Ո.)* ի Վրկանէ զբուն ձեռնական զաւրսն իւր զհամաշխարհիկ եւ զնայ ուղղորդ յարեւելս»: *Համաշխարհիկ* բառը ստուգաբանւում է իբրեւ միեւնոյն աշխարհից, միեւնոյն երկրից (տե՛ս **Ռ. Ղազարեան**, *Գրաբարի հոմանիշների բառարան*, Երեւան, 2006, էջ 401): Այնուհետեւ պատմիչը թուարկում է հայ նախարարներին, որոնք Սմբատի հետ էին, այսինքն՝ նրա զօրքի կազմում էին եւ միտքը աւարտում է՝ նշելով զօրքի թիւը: «Եւ զաւրք նորա» արտայայտութեան տակ պէտք

© National Library of Armenia

նախարարական ընտանիքների թիւը վեց եւ աւելի, ինչը նշանակում է, որ յիշատակուող գնդերը մեծ չէին, այլ հարիւրակներից բաղկացած միաւորներ: Նախարարների գնդերը իրենց թուաքանակով, կազմով կայուն եւ միանման միաւորներ չէին, ինչի հետեւանքով գնդի թուաքանակը մի քանի հարիւրից կարող էր հասնել մինչեւ մի քանի հազարի: Այս հանգամանքն էլ կանխորոշում էր պատերազմի ժամանակ ձեւաւորուող գունդ ստորաբաժանման եւ նախարարական գնդի տարբերութիւնները:

Յովհան Մամիկոնեանը թէեւ իր աշխատութեան մէջ հազուադէպ է ստորաբաժանումների անուանումներ գործածում եւ բաւարարւում է զօրքի քանակական տուեալները հաղորդելով, այնուամենայնիւ, այդպիսի վկայութիւններից մէկում գունդը շուրջ երեք հազար զինուոր ընդգրկող միաւոր է. «Ամենեքեան անդր հասանէին, ... որպէս եւ ինքեանք յետոյ ասէին՝ հինգ հազար եւ չորս հարիւր եւ ԾԶ այր... իբրեւ հասին ի գլուխ լերինն, ձայն գուժեաց յերկոսեան գունդսն»[60]:

Ղեւոնդի մօտ գնդի թուաքանակը խիստ անորոշ է: Այսպէս, պատմիչը նշում է, որ Աբու-լ-Աբաս խալիֆի օրօք (750-754) արաբական արքունիքը դադարեցնում է հայոց հեծելազօրին ռոճիկ վճարելը, եւ նախարարները իրենք պէտք է հանդերձաւորէին զօրքերի գնդերը. «...եւ զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն. եւ հարկ լինէր ի տանց իւրեանց հանդերձել զգունդս զօրացն եւ զընթացս զրաւաստակ աշխատութեանցն ողջ պահել»[61]: 703 թ. ապստամբութեան ժամանակ հայոց 2000-անոց զօրքը Ղեւոնդն անուանում է գունդ. «Անդ հասեալ յօգնականութիւն մեծազօրն Աստուծոյ գնդին Հայոց»[62]: Մէկ այլ հատուածում Մուշեղ Մամիկոնեանի 200 զինուորների խումբն է բնութագրում գունդ տերմինով. «Անդ ի վերայ հասանէր նոցա Մուշեղ եւ ընդ նմա արք իբրեւ մ. եւ մատուցեալք ընդ միմեանս՝ օգնութիւն ի տեառնէ վաղվաղակի հասանէր ի թիկունս գնդին Մուշեղայ»[63]: 774-775 թթ. արաբների դէմ ուղղուած ապստամբութեան առիթով հայկական եւ արաբական բանակներում պատմիչը յիշատակում է գնդեր. «Եւ ժողովեալ զգունդս իւրեանց իբրեւ արս եռ», «Ելանէին ապա եւ գունդք թշնամեացն ի վերայ նոցա բազում պատրաստութեամբ»[64]: Նոյն դէպքերի հետ կապուած 5000 ապստամբների զօրքը անուանում է գունդ. «Եւ այսպէս միախուռն ժողովեալք առ միմեանս՝ արք իբրեւ ը. զի բազումք ի ռամիկ ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա»[65]:

Թովմայ Արծրունին ռազմական բնագաւառի, այդ թւում՝ ստորաբաժանումների վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում: Եթէ պատմիչներից շատերին (Ասողիկ) բնորոշ է իր սկզբնաղբիւրների ռազմական տերմինների զգուշութեամբ գործածումը, երբեմն դրանց փոխարինումը ընդհանուր նշանակութեան բառերով, ապա Թովմայ Արծրունու մօտ տեսնում ենք հակառակ երեւոյթը: Նա ռազմական միաւորների անուանումներ կիրառում է նաեւ այն դէպքերում, երբ իր սկզբնաղբիւրներում դրանք չկան. նրա այս մօտեցումը հիմնաւորում է այդ ստորաբաժանումների առկայութիւնը իր ժամանակի ռազմական համակարգում:

Հայաստանի վաղ շրջանի պատմութիւնը ներկայացնելիս Թովման յաճախակի է գործածում գունդ տերմինը: Այսպէս, նկարագրելով Մարաստանի Աժդահակ թագաւորի դէմ Հայոց թագաւոր Տիգրան Երուանդեանի պատերազմը, նրա զօրքերը անուանում է գնդեր. «Ազդ եղեւ մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. եւ ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎրաց եւ զԱղուանից եւ զԱյրարատեան գազանամարտիկ անճոռնի զօրսն եւ զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն եւ զորդիսն Սենեքերիմայ»[66]: Խորենացու աշխատութեան համապատասխան հատուածում գունդ բառը չկայ. «Եւ ժողովէ արքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, եւ որչափ ընտիրք Վրաց եւ Աղուանից, եւ զամենայն ընտիրս Հայոց Մեծաց եւ Փոքունց: Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք Մեդացւոց»[67]:

Աւարայրի ճակատամարտը նկարագրելիս Թովման գունդ է անուանում պարսկական 140 եւ հայկական 696 զինուորներից կազմուած խմբերը. «Նոցա հարեալ ընդ իւրեանս կազմուած խմբերը. «Նոցա հարեալ ընդ կեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրեւ ճխ...եւ զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ողջ ոգիք»[68]: Թովմայի այս ինքնուրոյնութիւնը պայմանաւորուած է գնդի վերաբերեալ նրա պատկերացումներով: Արաբական բանակի ստորաբաժանումները պատմիչը բազմիցս յիշատակում է գունդ տերմինով. Բուղայի արշաւանքին (852-855) նախորդող դէպքերի հետ կապուած արաբական խալիֆի հրամանով ժողուած արաբական զօրքերից իւրաքանչիւրը անուանում է գունդ. «Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարգեւս եւ պսակս մատուցանէր... տեղեկանայր եւ զայն եւս ըստ իւրաքանչիւր գնդից...»[69]: Այստեղ խօսքը վերաբերում է խալիֆայութեան տարբեր մասերից ժամանած զօրքերին. «Եւ եղեւ ի մերձենալն նորա ի բանակն՝ եհան ընդ առաջ նորա գունդք գունդք զօրաց»[70], «եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու եւ ընտրեալ երիվարօք...», «եւ ընդ նմա գունդս զինուորաց վառելոց եւ ընտիր այրուձիոց»[71]: Թովմայի մի քանի այլ վկայութիւնների շնորհիւ պարզ է դառնում յիշատակուած գնդերի ընդգրկած զինուորների թուաքանակը: Թովմայ Արծրունին արաբական զօրքի հետ կապուած նշում է, որ Բուղայի՝ դէպի Արցախ արշաւանքի ժամանակ իշխան Եսայի Աբու Մուսէի դէմ պայքարի ընթացքում արաբական զօրքը դասաւորուած էր ըստ գնդերի, իւրաքանչիւր 500 զինուորին մի նշան էր տրամադրուած. «Կարգեցին ըստ գունդս գունդս առ շ այր նշանակ մի»[72]: Մէկ այլ տեղում Թովմայ Արծրունին նշում է, որ իւրաքանչիւր գնդին տրւում էր մի դրօշ. «Եւ դրօշք փողփողեալ ըստ միոյ միոյ գնդի»[73], ինչը հաստատում է, որ 500 զինուորը մի գունդ էր իրենից ներկայացնում:

Հայկական, յատկապէս Վասպուրականի ռազմական ուժերը Թովմայ Արծրունին բազմիցս յիշատակում է գունդ տերմինով՝ չկարեւորելով թուաքանակը: Այսպէս, նա գունդ է անուանում Գուրգէն Ապուպելճի 400 ազատների խումբը[74]: Այլ հատուածներում Թովմայ Արծրունին գունդ է կոչում աւելի մեծաթիւ զօրքը. Արեան լճի ճակատամարտում Գուրգէն Արծրունու գլխաւորած զօրքը՝ 900 զինուոր, նա անուանում է գունդ. «Հրաման ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատե-

---

է հասկանալ ամբողջ Հայաստանից այդ պահին մեկնած զօրքը եւ ոչ թէ միայն Սմբատի անձնական զօրքը:

60 Յովհան Մամիկոնեան, *Պատմութիւն Տարաւնոյ*, www.digilib.am:

61 Ղեւոնդ:

62 Նոյն տեղում:

63 Նոյն տեղում:

64 Ղեւոնդ:

65 Նոյն տեղում:

66 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

67 Մովսէս Խորենացի:

68 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

69 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

70 Նոյն տեղում:

71 Նոյն տեղում:

72 Նոյն տեղում:

73 Նոյն տեղում:

74 Նոյն տեղում:

© National Library of Armenia

բազմ», «եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա»[75]: Գուրգէն Արծրունու 700 զինուորները եւս նրա համար գունդ են. «...Մարզպանն Հայոց Գուրգէն... առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրեւ չ...եւ անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց...»[76]: Խոզաղբերքի ճակատամարտում Վասպուրականի զօրքի մասին խօսելիս պատմիչը նշում է, որ Արծրունեաց տանից մնացածները գունդ կազմեցին եւ հետեւակի հետ միասին չորս հազար հոգի էին. «Ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետեւազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք տ»[77]:

Նոյն պատկերը գնդի թուաքանակի անհաստատունութեան առումով տեսնում ենք պետականութեան վերականգնումից յետոյ: Յովհաննէս Դրասխանակերտցին յիշատակում է Աշոտ Բ-ի երեք հարիւր զինուորների խումբը, որոնց հետ վերջինս գնում էր Զորոփոր գաւառ՝ Սահակ Սեւադա իշխանի ապստամբութիւնը ճնշելու համար: Զինուորների այս խմբից երկու հարիւրն էին մասնակցում ճակատամարտին եւ Դրասխանակերտցին նրանց խումբը անուանում է գունդ: Նրա ասելով՝ թագաւորը մարտի մէջ է մտնում՝ չնայելով իր գնդի փոքրաթիւ լինելուն. «Այնուհետեւ ոչ զանգիտեալ ի բազմութենէ զօրաց իշխանին եւ ոչ զնուազունս իւր գունդ»[78]: Երբ արաբական խալիֆը Սմբատ Ա-ից օգնական զօրք է պահանջում Իւսուֆի ապստամբութիւնը ճնշելու համար, Սմբատը զօրք է գումարում, գունդ է կազմում: Մի քանի տող ներքեւ նշւում է, որ Սմբատը հազար զինուոր է պատրաստում, այսինքն՝ այդ գունդը այստեղ հազար հոգուց էր բաղկացած. «(Սմբատ Ա-ն - Կ. Ո.) առ ա-

75 Նոյն տեղում:

76 Նոյն տեղում:

77 Նոյն տեղում:

78 Յովհաննէս Դրասխանակերտցի:

կանէ քարտուղարի զօր գումարէ եւ գունդ կազմէ.... եւ արս իբրեւ հազար մի որպէս թէ թուեցուցանէր կարապետ առաջի իւր առաքեալ ընդ կողմն Վասպուրականի ընդ այն չուելոյ»[79]:

Ատրպատականի ամիրա Իւսուֆի դէմ Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունու (908-943) պայքարի ընթացքում նրա զօրքերի կազմում Դրասխանակերտցին նշում է ազատագունդ բանակ եւ հեծելազօր գունդ: Հեծելազօր գնդի առանձին յիշատակումը վկայում է, որ այն բանակի մի մասն է կազմել. «Թագաւորն եւ եղբայր նորուն՝ Գուրգէն ազատագունդ բանակաւն եւ հեծելազօր գնդիւն ի զէնս եւ ի զարդս եւ ի տէգս նիզակաց վառեալք»[80]: Սահակ Սեւադա իշխանի ապստամբութեան ժամանակ նրա 8000 զուտ մարտակի մէջ առանձնացուում են հեծեալ գունդ եւ հետեւակ գունդ ստորաբաժանումները[81]: Թէեւ դժուար է միանշանակ ասել, թէ այստեղ հետեւակ եւ հեծեալ գնդերի թուային յարաբերակցութիւնը ինչպիսին էր, այնուհանդերձ, կարելի է ենթադրել, որ այդ գնդերը հազարեակներից էին կազմուած:

Գնդի վերաբերեալ Դրասխանակերտցու վկայութիւնները հաստատում են, որ այն թուաքանակի առումով հաստատուն միաւոր չէր, կարող էր կազմուած լինել միայն հարիւրակներից, ինչպէս նաեւ՝ հարիւրակներից եւ հազարեակներից:

Ինչի՞ հետեւանք կարող է լինել այս պատկերը, ո՞րն է գնդի թուաքանակի այսքան կտրուկ տատանումների պատճառը: Հայաստանի առաջին բաժանումից եւ պետութեան անկումից յետոյ զօրքի ընդհանուր թուաքանակի նուազման հետեւանքով հայոց 120,000-անոց բանակից մարզ-

79 Նոյն տեղում:

80 Նոյն տեղում:

81 Նոյն տեղում:

պանութեան շրջանում մնացել էր 30,000-անոց զօրք[82]: Այս փոփոխութիւնը անմիջականօրէն պէտք է ազդէր նախարարների զօրքի ստորաբաժանումների թուաքանակի վրայ: Պետութեան բացակայութեան պայմաններում իր գոյութիւնը պահպանել էր նախարարական համակարգը, դրա հետ միասին ռազմական կառոյցը: Պարսկաստանի տիրապետութեան տակ նախարարները ներքին առումով որոշակի ինքնուրոյնութիւն վայելում էին: Այդ ինքնուրոյնութեան շրջանակների մէջ էր մտնում ռազմական ուժ ունենալը: Զ դարից տեսնում ենք, որ բոլոր նախարարների զօրքերը բնութագրւում են գունդ տերմինով: Իւրաքանչիւր նախարար ունէր իր գունդը: Միեւնոյն ժամանակ Զօրանամակից գիտենք, որ նախարարաների զօրքերի թուաքանակները խիստ տարբեր էին՝ 50-4500[83]: Սեբէոսի վկայութիւններից յստակ երեւում է, որ, անկախ թուաքանակից, իւրաքանչիւր նախարարի զօրքը կոչւում է գունդ: Նախարարներին եւ նրանց գնդերին վերաբերող Սեբէոսի վկայութիւնները Զօրանամակի հետ համեմատելիս նկատում ենք մի ուշագրաւ փաստ. պատմիչը նախարարներին թուարկելիս պահպանում է Զօրանամակում նրանց յաջորդականութիւնը՝ ըստ իրենց զինուորական ուժի քանակի:

Ներկայացնենք օրինակներից մէկը. Սմբատ Բագրատունու հետ միասին Պարսկաստան մեկնած 2000-անոց զօրքի կազմում եղած վեց նախարարական տների յիշատակման յաջորդականութիւնը եւ նրանց զօրքերի թուաքանակը Սեբէոսի մօտ եւ Զօրանամակում համընկնում են.

Վարազշապուհ Արծրունի - 1000

Սարգիս Տայեցի - 1000

Մանուէլ Ապահունի - 1000

Վռամ Գողթնեցի - 500

Սարգիս Դիմաքսեան - 300

Սարգիս Տրպատունի - 100

Նախարարների ռազմական ուժի այս պատկերը արտացոլում է պետականութեան շրջանի իրականութիւնը, իսկ մարզպանական շրջանում այս թուերը նուազած պէտք է լինէին: Այդ մասին է վկայում հետեւեալ փաստը. ըստ Զօրանամակի այստեղ յիշատակուող նախարարների ընդհանուր զօրքի թիւը 3900 է, իսկ Սեբէոսը գրում է ընդամէնը 2000-ի մասին: Սա, իհարկէ, չի նշանակում, որ մարզպանութեան շրջանում բոլոր նախարարները նոյն թուաքանակով գնդեր ունէին, քանի որ դրանց մեծութիւնը կախուած էր նրանց տիրոյթների չափից եւ տնտեսական հզօրութիւնից: Այսպէս, Սեբէոսի մէկ այլ տեղեկութեան համաձայն՝ հայ նախարարները Հայաստանը բաժանում են իրար մէջ՝ ըստ իրենց հեծեալների թուի. «Եւ բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, եւ կարգեցին հարկապահանջս ոսկւոյ եւ արծաթոյ»[84]: Եթէ իրարից թուաքանակով բաւականին տարբեր այս զօրամիաւորումները նոյն տերմինով են բնութագրւում, ապա այս փաստը ինքնին վկայում է, որ գունդը յստակ թուաքանակ չէր կարող ունենալ: Սեբէոսի կողմից նախարարական գնդերի տարբերակումը ռազմական ստորաբաժանում գնդից անուղղակիօրէն հաստատում է այն միտքը, որ գունդը, որպէս ռազմական միաւոր, որոշակի թուաքանակային սահմաններ ունէր:

Արաբական տիրապետութեան շրջանում այս հազիւ նշմարելի տարբերութիւնն էլ է անհետանում: Պատճառը, ամենայն հաւանականութեամբ, զօրքի թուաքանակի հետագայ նուազումն էր. այն հասնում էր 15,000-ի, ինչը նշանակում է,

82 Ա. Տէր-Ղեւոնդեան, *Հայաստանը Արաբական խալիֆայութեան ներքոյ եւ հայ ժողովրդի պայքարը անկախութեան համար VII-IX դդ.*,- Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. II, էջ 320:

83 Ն. Ադոնց, նշ. աշխ., էջ 282-283:

84 Սեբէոս:

© National Library of Armenia

որ պէտք է նուազէին նաեւ նախարարների գնդերի թուաքանակները: Այս տեսանկիւնից նայելիս պարզ է դառնում, թէ ինչու է գունդն ընդգրկում այդքան լայն տիրոյթ՝ 140-5000 զինուոր: Միջնադարեան պատմագրութեան մէջ գնդի վերաբերեալ հակասական տեղեկութիւնները ոչ թէ պատմիչների անտեղեակութեան, անհետեւողականութեան կամ ռազմական բնագաւառի չիմացութեան արդիւնք են, այլ արտացոլում են Հայաստանի ռազմական կառոյցում գոյութիւն ունեցող իրական պատկերը, որը եւ պատմիչները բարեխղճօրէն ներկայացրել են:

Գնդի հետ կապուած փոփոխութիւնների վերաբերեալ անգնահատելի տեղեկութիւններ է հաղորդում Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը: Նա այն բացառիկ հեղինակներից է, որ ռազմական տերմինները գործածում է միայն իրենց հիմնական՝ ստորաբաժանումների իմաստով: Նրա աշխատութեան մէջ գունդ միաւորի թուաքանակի վերաբերեալ հակասական տուեալներ չկան, ընդհակառակը՝ յաջողւում է աւարտուն, ամբողջական պատկերացում կազմել այդ ստորաբաժանման վերաբերեալ: Գունդ տերմինով նա նշում է ինչպէս հայկական, այնպէս էլ բիւզանդական, պարսկական եւ արաբական ռազմական ուժերը:

Ասողիկը իր սկզբնաղբիւրների շատ հատուածներ բառացի է մէջբերում իր աշխատութեան մէջ: Պատմագիտութեան մէջ նոյնիսկ արտայայտուել է այն կարծիքը, որ Ասողիկի երկի առաջին երկու հանդէսների կարեւորութիւնը՝ սկզբնաղբիւրների բնագրերի խաթարուած հատուածները վերականգնելու մէջ է[85]: Սակայն ռազմական բնագաւառին վերաբերող վկայութիւնները Ասողիկը նոյնութեամբ չի կրկնում: Այստեղ պատմագիրը հարազատ է մնում իր ժամանակաշրջանին եւ միջավայրին: Նա վերապահումով է մօտենում ինչպէս Խորենացու, այնպէս էլ միւս սկզբնաղբիւրների ռազմական ստորաբաժանումներին վերաբերող տեղեկութիւններին եւ շատ դէպքերում դրսեւորում է ինքնուրոյն մօտեցում:

Խորենացու աշխատութեան տարբեր հատուածներ մէջբերելիս Ասողիկը միայն երկու վկայութիւնում է նոյնութեամբ կրկնում գունդ անուանումը.

Եդեսիա քաղաքի հիմնադրման կապակցութեամբ Խորենացին նշում է, որ քաղաքի հիմնադրման վայրը նախկինում հայոց գունդն էր պահպանում. «Յայնժամ շինէ քաղաք զտեղի պահպանութեան գնդին Հայոց»[86], Ասողիկը ներկայացնում է այս իրադարձութիւնները առանց որեւէ փոփոխութեան. «Յայնժամ Աբգար շինէ քաղաք զտեղի պահպանութեան գնդին Հայոց»[87]: Վաղարշակ թագաւորի իրականացրած բարեփոխումների ժամանակ Հայկի ժառանգներից Սիսակի սերնդին՝ տոհմին, Խորենացին անուանում է գունդ. «Զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի»[88]: Տարօնեցին այս հատուածում նոյնպէս անփոփոխ կերպով օգտագործում է գունդը. «Զի ի Սիսակայ ցեղէն էր գունդն, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի»[89]:

Որոշ դէպքերում Ասողիկը խուսափում է գունդ տերմինից, աւելի շատ նախընտրում է զօրք բառը կամ շրջանցում է գնդի յիշատակութեամբ հատուածները: Խոսրով Գ-ի (330-338) ժամանակաշրջանում մազքութների դէմ պատերազմի առիթով Խորենացին նշում է Վահան Ամատունու քաջագործութիւնները: Սարսափահար թշնամին փախուստի է դիմում.

85 Լ. Բաբայեան, նշ.աշխ., էջ 117:

86 Մովսէս Խորենացի:

87 Ստեփանոս Տարօնեցի:

88 Մովսէս Խորենացի:

89 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ:

«Ընդ գաւակ ձիոյն հարեալ՝ յերկիր կործանեաց զահագին զվիրագն: Այսպիսի դիպուած ի փախուստ յորդորեաց զթշնամիսն, եւ ի յաղթութիւն զհայոց գունդն զօրացոյց»[90]: Ասողիկը հատուածը նոյնութեամբ կրկնում է, բացառութեամբ վերջին հատուածի, որտեղ հայկական բանակը անուանուած է գունդ. «Եւ ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանեաց զահագին վիրագն. յորմէ զարհուրեալ թշնամեացն ի փախուստ դառնային»[91]:

Վկայութիւնների մի մասում Ասողիկը ինքնուրոյնութիւն է դրսեւորում՝ դիմելով Խորենացու մօտ բացակայող գունդ տերմինին: Այսպէս, խօսելով Ռշտունեաց նահապետ Մանաճիհրի՝ Հայաստանի հարաւային զօրքերի հրամանատարի մասին, Ստեփանոս Տարօնեցին նշում է նրա արշաւանքը Բակուր բդեշխի դէմ հարաւային զօրքերով եւ Կիլիկիաց գնդով. «Եւ նորա եկեալ թագաւորեցոյց զԽոսրով. եւ զՄանաճիհր հարաւային զօրօքն եւ կիլիկեցի գնդաւն առաքէ ի վերայ Բակուր բդեշխին»[92]: Մովսէս Խորենացու աշխատութեան համապատասխան հատուածում նշուած է Կիլիկիայի զօրքը, գունդ բառը չկայ. «Եւ առաքեաց զՄանաճիհր հարաւային զօրօք եւ զկիլիկեցի զօրս ընդ նմա»[93]: Կարին քաղաքի հիմնադրման կապակցութեամբ Խորենացին նշում է բիւզանդական կայսեր կողմից պահպան գնդերի տեղադրման մասին. «Եւ ելից զինու եւ պահպան գնդիւք զքաղաքն, եւ անուանեաց Թէոդուպոլիս»[94]: Ասողիկը նոյն դէպքերի մասին պատմելիս գունդը նշում է եզակի թուով. «Եւ ելից զինու եւ պահպանական գնդիւ զքաղաքն»[95]:

Աշխատութեան հետագայ շարադրանքում եւս պահպանւում է ստորաբաժանումների անուանումների նկատմամբ քննախոյզ վերաբերմունքը: Այն հատուածներում, որտեղ գունդը չի համապատասխանում նրա պատկերացումներին, Ասողիկը գործածում է փոխարինող տերմիններ, հիմնականում՝ զօրք բառը: Խօսելով արաբա-բիւզանդական պատերազմների մասին Ասողիկը նշում է բիւզանդական 70,000 զօրքի հաւաքագրման մասին. «Եւ դարձեալ այլ զօր կազմեաց կայսրն Հերակլէս -հռ եւ առաքեաց ընդդէմ նոցա»[96]: Այս իրադարձութիւնների մասին գրել է Սեբէոսը եւ զօրքի հաւաքագրման ընթացքը նկարագրելիս նշել է գնդերի կազմման մասին, որը Ասողիկը շրջանցել է. «Եւ սկսաւ գունդս կազմել իբրեւ ՀՌ, (70,000) եւ ետ նոցա զաւրավար՝ զոմն մի ի հաւատարիմ ներքինեաց իւրոց, եւ հրաման ետ երթալ նոցա յԱրաբիա»[97]:

Այն դէպքերում, երբ նախորդ հեղինակի գունդը համապատասխանում է պատմիչի պատկերացրած գնդին, Ասողիկը նոյնութեամբ է բերում սկզբնաղբիւրի բնագիրը: Խօսելով Աբդ ալ-մալիք (685-705) խալիֆի օրոք դէպի Հայաստան կազմակերպուած արաբական արշաւանքների եւ Բագրեւանդի Ս. Գրիգոր եկեղեցու գրաւման եւ կողոպտման մասին՝ Տարօնեցին նոյնութեամբ մէջբերում է Ղեւոնդ պատմիչի նկարագրութիւնը. «Իսկ յետ -ժզ ամի իշխանութեանն իւրոյ Աբդլմէլիք հրամայեաց զօրաց իւրոց ի ձեռն զօրագլխին Մահմետի ելանել յաշխարհս Հայոց: Որոց եկեալ եւ տեսեալ զուխտ սրբոյն Գրիգորի պայծառ զարդուք եւ երեւելի սպասուք՝ նիւթեն չարիս ի վերայ նորա: Եւ երթեալ գունդ մի անօրինաց օթեւանել ի յարկս նորա»[98]: Նոյնը տեսնում ենք ա-

90 Մովսէս Խորենացի:

91 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ:

92 Նոյն տեղում:

93 Մովսէս Խորենացի:

94 Մովսէս Խորենացի:

95 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ:

96 Նոյն տեղում:

97 Սեբէոս:

98 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ:

© National Library of Armenia

բաբական երկրորդ արշաւանքի (642-643) հետ կապուած դէպքերի առնչութեամբ. այստեղ եւս Ասողիկը նոյնութեամբ կրկնում է Ղեւոնդի տուեալները. «Եւ մեծ մասն զօրուն հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից. եւ առնուին ի գերութիւն զաւանս Մարաց եւ զգաւառն Գողթն եւ զդաստակերտն Նախջաւանու. Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պոռկոպ...»[99]: «Եւ մեծ մասն զօրուն ասպատակեալ յաւարի առին զՄարս, զԳողթն, զՆախճաւան: Եւ գունդ մի ասպատակեալ ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պոռկոպ՝ եւ հարկանէին զնա»[100]: 762 թ. Վասպուրականում բռնկուած ապստամբութեան նկարագրութեան մէջ Ասողիկը արաբների զօրքը բնութագրում է գունդ *տերմինով. «Եւ ապա գունդ մի յիսմայէլացւոց, եւ անուն զօրավարին նոցա Սլիման, ի կողմանցն Պարսից ասպատակեալ յաշխարհն Վասպուրականի»[101]: Ղեւոնդը նոյն դէպքերի մասին խօսելիս արաբների զօրքը* գունդ *տերմինով չի բնորոշում:*

Յովհաննէս Զմշկիկ (969-976) կայսեր հրամանով բիւզանդական զօրքերը պաշարում են Ամիդ քաղաքը, որտեղ գտնուող զօրքից 400 զինուորներ, դուրս գալով քաղաքից, յարձակւում են դռների մօտ կանգնած գնդի վրայ. «Իսկ Կիւռ-Ժան Թագաւորն Յունաց բիւրաւոր զօրօք զՄլեհ դեմեալիկոսն առաքէ յԱմիթ. որ եկեալ պաշարէ զԱբութալհապ թոռն Համտունայ: Եւ յանկարծ յեղակարծ ժամու արք -ն սուսերամերկք, հեծեալք յերիվարս՝ ի բաց ելանէին ընդ դուռն քաղաքին, սուսերահար արարեալ զգունդն, որ առաջի դրանցն կայր, եւ զամենայն զօրն ցիր եւ ցան տուեալ, զբազումս սրախողխող արարեալ. եւ կալան զՄլեհ դեմեալիկոսն, որ եւ մեռաւ ի Տաճկունսն»[102]: Պարզ է, որ պատմիչը յստակ տարբերակում է գունդը՝ որպէս ստորաբաժանում եւ 400 զինուորների խումբը գունդ *չի անուանում, այլ դռների մօտ գտնուող զօրքն է անուանում* գունդ, *որն աւելի մեծաթիւ էր:*

Ատրպատականի ամիրա Աբու-լ-Հայջան (Աբլհաճ) Վասպուրականի վրայ ձեռնարկուելիք յարձակման ժամանակ զօրքը բաժանում է երեք մասի, որոնցից երկուսը Ասողիկը անուանում է գունդ, *իսկ զօրքի մեծ մասը՝ բանակ. «Եւ ժողովեալ զբազմութիւն խուժադուժացն Պարսից՝ գայ հասանէ ի մուտս սահմանացն Վասպուրականի, յերիս յառաջս զզօրսն բաժանելով յերեկոյացեալ ժամուն. զի առ վաղիւն գունդ բանակին միոյ ընդ աջակողմն սփռեալ ընդ եզերս աշխարհին, եւ մինն՝ ընդ ահեկեայսն, եւ ինքն բանակաւ մեծաւ զմիջոց աշխարհին կալցէ, զի մի ոք կարասցէ ապրել ի քրիստոնէիցն»[103]: Այս վկայութիւնը աւելի է յստակեցնում պատկերը. ամբողջ զօրքը անուանում է բանակ, որի մէջ գնդեր կան, պատմիչը յիշատակում է երկու գունդը, որոնք մարտական առաջադրանք ունէին Վասպուրական մտնելու աջ եւ ձախ ուղղութիւններով, իսկ զօրքի գլխաւոր հատուածը անուանում է «բանակաւ մեծաւ», որով պէտք է նուաճէր երկրի կենտրոնական շրջանները: Այս վկայութիւնից նաեւ երեւում է, որ գունդը ինքնուրոյն ռազմական գործողութիւններ իրականացնող միաւորում էր: Վերը նշուած օրինակները ցոյց են տալիս, որ Ստեփանոս Տարօնեցին իր աշխատութեան մէջ անհարկի չի օգտագործում* գունդ *տերմինը, ընդհակառակը՝ քննադատաբար է մօտենում իր սկզբնաղբիւրների՝ ստորաբաժանումներին վերաբերող վկայութիւններին: Սա*

99 Ղեւոնդ:

100 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ:

101 Նոյն տեղում:

102 Նոյն տեղում:

103 Նոյն տեղում:

կարելի է բացատրել նրանով, որ գունդը Ասողիկի ապրած ժամանակաշրջանում հայոց բանակի ստորաբաժանում էր, որն ունէր յստակ, որոշակի թուաքանակ, որը եւ պարտաւորեցրել է մեր պատմիչին համապատասխան դիրքորոշում դրսեւորել:

Հայոց բանակում գնդի վերաբերեալ Ստեփանոս Տարօնեցու եզակի վկայութիւնը ուղղակի անգնահատելի արժէք ունի հայոց բանակի կառուցուածքի բացայայտման տեսանկիւնից. Գագիկ Ա-ի ժամանակաշրջանի հետ կապուած նա նշում է, որ հայոց թագաւորը բանակից առանձնացնում է մի գունդ, որը բաղկացած էր 6000 զինուորներից. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ -զո յընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի, որդւոյ Վահրամայ»[104]: Գնդի յստակ սահմանուած թուաքանակ ունենալը հաստատւում է Ասողիկի մէկ այլ վկայութեամբ. 6000 թուաքանակով գունդ պատմիչը յիշատակում է բիւզանդական բանակում ծառայող ռուս զինուորների մասին խօսելիս. «Եւ ի հետեւակագնդէն Ռուզաց ոմն ելեալ խոտ տանէր երիվարին իւրոյ. իսկ ոմն ի Վրաց կամեցաւ խլել զայն. եւ նորա աղաղակեալ՝ եկն ոմն յիւրոցն օգնել նմա. նոյնպէս եւ Վրացւոյն յիւրսն աղաղակեալ՝ որք եկեալ սպանանէին զառաջին Ռուզն: Եւ ապա բոլոր ազգն Ռուզաց, որ ի տեղւոջն յայնմ՝ շարժեցան ի պատերազմ. (զի էին նոքա արք -զո հետեւակամարտք, նիզակ եւ ասպար ի ձեռս նոցա, զորս էր խնդրեալ թագաւորին Վասլի ի թագաւորէն Ռուզաց»[105]: Այս վկայութեան մէջ Ասողիկը ռուսական զօրքը անուանում է հետեւակագունդ՝ հետեւակ գունդ եւ մի քանի տող ներքեւ նշում է այդ գնդի թուաքանակը՝ 6000 զինուոր: Սա նշանակում է, որ այդ թուաքանակը բնութագրական է եղել գնդի համար:

Գունդ *տերմինը Տարօնեցին պատահական երբեք չի գործածել: Մնացած դէպքերում եւս, երբ նա գործածում է գունդը, խօսքը վերաբերում է հէնց 6000 թուաքանակին:*

Վերը նշուածից երեւում է, որ Ստեփանոս Տարօնեցին առաջնորդուել է իր ապրած ժամանակաշրջանի՝ Ժ դարի երկրորդ կէսի եւ ԺԱ դարի սկզբի իրողութիւններով: Այն հանգամանքը, որ մենք այս շրջանում, որպէս գերիշխող ստորաբաժանում, տեսնում ենք գունդը, յուշում է՝ այն եղել է բանակի հիմնական ստորաբաժանումը:

Մատթէոս Ուռհայեցին հայոց բանակի երկու մասերը յիշատակելիս՝ ենթակայ թագաւորութիւններից եւ իշխանութիւններից հաւաքագրուած զօրքը անուանում է մարզպետական գունդ, իսկ թագաւորական զօրքը՝ արքունական գունդ. «Յայսմ ամի ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն եւ հինգ հազար արանց քաջաց, զատ ի յարքունական գնդէն»[106]: Ըստ էութեան, մարզպետական եւ արքունական զօրքերը ոչ թէ միասնական բանակ էին իրենցից ներկայացնում, այլ բաղկացած էին տարբեր գնդերից: Մարզպանական գունդը կազմւում էր ենթակայ թագաւորութիւնների եւ իշխանութիւնների զօրքերից, որոնցից իւրաքանչիւրն իրենից առանձին զօրաջոկատ էր ներկայացնում: Այդ մասին են վկայում պատմիչների՝ ենթակայ թագաւորութիւնների զօրքերին տրուած գունդ *բնութագրումները: Յովհաննէս Դրասխանակերտցին Վասպուրականի թագաւորութեան հռչակումից յետոյ (908) Վասպու-*

104 Նոյն տեղում:

105 Նոյն տեղում:

106 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, www.digilib.am:

© National Library of Armenia

բականի զօրքերը յիշատակում է գունդ տերմինով. «Եւ այսպէս առնաբար քաջութիւնս յանձին իւրեանց տպաւորեալ հանդերձ սպասալար[107] եւ պայազատ[108] գնդիւն՝ զբազումս ի Հագարացւոցն թաւալգլոր խաղացուցանէին», «եւ ինքն (Գագիկ Արծրունին - Կ. Ո.) եղբարբն իւրով եւ սպասալար գնդիւն վառելովք՝ արձանացեալ դադարէր ի միջերկրեայս եւ անդ զգուշացեալ յանգայռագիղ գազանէն եւ ի պատրաստի միշտ ունելով զմիտս իւրեանց»[109]: Ստեփանոս Տարօնեցին յիշատակում է Կարսի թագաւոր Աբասի (984-1029) գունդը. «Եւ նորա առեալ զամենայն զօրս Հայոց եւ զԳագիկ զեղբայր իւր՝ գնաց առ նոսա ի գաւառն Ջաւախաց. եւ բանակին ի գիւղն, որ կոչի Դլիվեկն, եւ մանուկն Աբաս թագաւորն Կարուց կարմրազգեստ զգունդն իւր ունելով»[110]:

Գունդն ունեցել է նաեւ առանձին զօրատեսակի, զօրքի որեւէ հատուածի իմաստ: Բագրատունեաց շրջանի Հայոց բանակի հիմքը կազմել են ազատները, այդ պատճառով էլ յաճախ է հանդիպում «ազատագունդ» բնութագրումը: Այն բազմիցս յիշատակում է Թովմայ Արծրունին, որը հիմնականում խօսում է Վասպուրականի ազատների գնդերի մասին: Նրա վկայութիւններից երեւում է, որ Վասպուրականի իշխանական տներից իւրաքանչիւրն ունէր իր ազատների գունդը: Այսպէս, Վասպուրականի գահերէց իշխան Աշոտ Արծրունին (850-875) արաբների յարձակմանը դիմագրաւելու համար հաւաքագրում է Վասպուրականի նախարարական ընտանիքների ազատների գնդերը. «Առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք»: Նկան բերդում ամրանալու ժամանակ Վասպուրականի գահերէց իշխան Աշոտ Արծրունու հետ էին Վասպուրականի նախարարների ազատների գնդերը. «Եւ որք ընդ նմա էին գունդք ազատաց»[111]:

Սկզբնաղբիւրներում գնդերը յիշատակւում են նաեւ ըստ զօրատեսակների՝ հեծեալ եւ հետեւակ գնդեր: Դեռ վաղ միջնադարից հայոց բանակի մաս էր կազմում հասարակ բնակչութիւնից հաւաքագրուած հեծելազօրը[112]: Բագրատունեաց շրջանում

109 Յովհաննէս Դրասխանակերտցի:

110 Ստեփանոս Տարօնեցի:

111 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

112 Գիւղացիներից հաւաքագրուող հեծելազօրը վաղ միջնադարում յայտնի էր «ռամիկ այրուձի»

այն շարունակում էր իր գոյութիւնը պահպանել: Բուղայի արշաւանքի ժամանակ յիշատակւում է Տարօն գաւառի գիւղացիներից կազմուած հեծեալ գունդը. «Իսկ զգաւառին հեծելագունդն զգռեհիկս»[113]: Ապստամբ Սահակ Սեւադա իշխանի հաւաքագրած զօրքի մէջ յիշատակւում է հեծեալ գունդ. «...Եւ ի թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդն պատրաստէր՝ սպառազինեալս եւ վառեալս ի զէնս եւ ի զարդս...»[114]:

Հեծեալ գունդ յիշատակւում է Սիւնիքում: Արաբ զօրավար Նսրը հեռացել է Սիւնիքից՝ տեսնելով Սմբատ իշխանի հեծելազօր գունդը. «Բայց իբրեւ ետես զնա յաւէտ զգուշացեալ բազում հեծելազօր գնդիւ եւ ամրոցօք եւս վայրիցն բազձեալ՝ այնուհետեւ խաղաղութիւն ընդ նմա խօսէր»[115]: Ստեփանոս Տարօնեցին բիւզանդական բանակի կազմում յիշատակում է հայոց զօրքը՝ հետեւակ գունդը, որը փրկել է Վասիլ Բ կայսրին. «Այլ հետեւակագունդն Հայոց ի մէջ առեալ զթագաւորն Վասիլ զկնի եւ յառաջոյ՝ ընդ այլ ճանապարհ լեռնագնաց տարեալ հանին ի Մակեդոնիա»[116]: Հետեւակ գունդը յիշատակում է Թովմայ Արծրունին՝ Արեան լճի ճակատամարտը նկարագրելիս: Նա նշում է, որ Վասպուրականի գահերէց իշխան Աշոտ Արծրունու եղբայր Գուրգէնը իր հեծելներով ձախ կողմում է դիրքաւորւում, որպէսզի պաշտպանի հետեւակ գնդին. «Եւ ինքն զօրավարն Գուրգէն եկաց ի ձախու կողման ճակատուն՝ ի թիկունս լինել գնդին հետեւակազօր մարտակցացն»[117]: Հայոց բանակի կառուցուածքային այս մասերի՝ հեծելազօրի եւ հետեւակի մասին վկայութիւնները աղբիւրներում բաւականին շատ են, մենք այստեղ ներկայացրեցինք այն դէպքերը, երբ դրանք որպէս գունդ են յիշատակւում:

Վերը բերուած եւ սկզբնաղբիւրներում եղած միւս վկայութիւնները ամբողջացնելիս նկատում ենք, որ գունդը, բանակի ռազմական միաւորի իմաստից բացի, արտայայտել է ուղղակի զօրքի իմաստ: Ղեւոնդ պատմիչը գունդ տերմինը գործածում է նաեւ զօրք իմաստով: Այս երեւոյթը ակներեւ է յատկապէս այն դէպքերում, երբ միեւնոյն ճակատամարտի կամ պատերազմի նկարագրութեան առիթով զօրքի կազմում նշւում է բազմաթիւ գնդերի առկայութիւնը եւ մի փոքր անց ընդհանուր այդ զօրքը՝ հայկական կամ հակառակորդ բանակը, անուանւում է գունդ: 774-775 թթ. արաբական տիրապետութեան դէմ բռնկուած ապստամբութեան ժամանակ հայ իշխանների զօրքի մէջ Ղեւոնդ պատմիչը յիշատակում է գնդեր. «Եւ ժողովեալ զգունդս իւրեանց իբրեւ արս եռ»: Այդ գնդերը Կարինի պաշարման եւ Արձնիի ճակատամարտի առիթներով անուանւում են «Հայոց գունդ». «Եւ մինչդեռ մարտնչէին գունդն Հայոց ընդ ամրոցին», «Եւ իբրեւ բախեցին ընդ միմեանս՝ նախ զօրացեալ գունդն Հայոց»[118]: Վասպուրականի յայտնի զօրավար Գուրգէն Ապուպելճի մղած ճակատամարտի առիթով արաբական զօրքը մի տեղում անուանւում է գունդ, միւս դէպքերում՝ գնդեր. «Եւ ապա փոքր մի կազդուրեալ գնդին Տաճկաց՝ կացին

անուամբ, այն կազմաւորւում էր թագաւորի կամ նախարարների հայեցողութեամբ: Նրա դերը մեծանում է յատկապէս մարզպանական ժամանակաշրջանում, երբ յատուկ կարգ է սահմանւում. գիւղական համայնքի իւրաքանչիւր իններորդ երդը պէտք է տար մէկ հեծեալ (տե՛ս Ց. Մանանդեան, *Երկեր*, հտ. Բ, Երեւան, 1978, էջ 347. Ս. Երեմեան, *Հայաստանը ֆէոդալական յարաբերութիւնների ձեւաւորման ժամանակաշրջանում (III-IV դ.դ.)*,- Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. II, էջ 128):

113 Յովհաննէս Դրասխանակերտցի:

114 Նոյն տեղում:

115 Նոյն տեղում:

116 Ստեփանոս Տարօնեցի:

117 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

118 Ղեւոնդ:

© National Library of Armenia

յոտն, Յայնժամ տէր Գուրգէն առ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ եւ եհար զգունդն զձախակողմն Տաճկաց եւ պատառեաց զռազմն եւ դարձոյց զերեսս նոցա... բայց պարտեալ եղեւ գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ»[119]:

Գունդ *տերմինը գործածուել է նաեւ ռազմի դաշտում մարտակարգի թեւերը ցոյց տալու նպատակով: Այսպէս, Արճուճքի ճակատամարտում Աշոտ Արծրունու զօրքի երեք հատուածները նշւում են* գունդ *բառով. «Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն եւ նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, եւ ի դիմի հարեալ միմեանց եւ հատանէին յերիս առաջս: Զգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ եւ Վահանայ Հաւնունոյ, որ եւ նիզակակից նմա էր: Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, եւ նիզակակից էր նորա Վահան Արծրունի: Եւ գունդն երրորդ ի ձեռս իշխանին, որ եւ յարդարիչ պատերազմին»[120]:*

Այսպիսով, մինչեւ պետականութեան վերականգնումը Հայաստանի ռազմական կառոյցում առաւել յայտնի էր գունդ ստորաբաժանումը: Նախարարների զօրքերը պատմիչները բնութագրում են բացառապէս գունդ *տերմինով: Գնդի առաւելագոյն թուաքանակը կարող էր հասնել մի քանի հազարի, նուազագոյնը՝ մի քանի հարիւրի: Պետականութեան վերականգնման շրջանում ռազմական բնագաւառում կատարւում են որոշակի նորամուծութիւններ. բանակի քանակական աճին զուգահեռ նկատում ենք զօրքի մեծ քանակութիւնը բնութագրող նոր տերմինի՝* գումարտակի *հանդէս գալը: Աշոտ Ա-ի ջանքերի շնորհիւ Հայաստանում սկսուած քաղաքական եւ տնտեսական վերելքը շարունակւում է Սմբատ Ա-ի օրոք[121]: Հայաստանի սահմանների ընդարձակումը, Հայաստանի՝ կովկասեան տարածաշրջանում գերիշխանութիւնը եւ վերածումը տարածաշրջանային տերութեան՝ հնարաւոր էր միայն ուժեղ եւ կանոնաւոր բանակ ունենալու դէպքում: Այդ պատճառով Սմբատ Ա-ն որոշակի քայլեր է ձեռնարկում ռազմական նոր, կայուն կառոյց ստեղծելու ուղղութեամբ: Գումարտակ ստորաբաժանման մուտքը հայոց բանակ եւ նրա վերածումը մեծ ստորաբաժանման՝ վկայում է Սմբատ Ա-ի օրոք ռազմական բնագաւառում իրականացուած բարեփոխումների մասին: Այսպիսով, պետականութեան վերականգնումից յետոյ ստեղծւում է բանակի խոշոր միաւոր՝ գումարտակը, որն իր մէջ էր ներառում գունդը:*

Սմբատ Ա-ի կառավարման վերջին շրջանում եւ նրա ողբերգական մահից յետոյ բանակը քայքայւում է, նրա թիւը նուազում է: Գումարտակը որոշ ժամանակ պահպանում է նախկին իմաստն այն առումով, որ ցոյց է տալիս ռազմականապէս պատրաստուած, երբեմն փոքր թուաքանակով, բայց հակառակորդի նկատմամբ զգալի առաւելութիւն ունեցող միաւոր: Աբաս թագաւորի օրոք գումարտակ ստորաբաժանումը նորից յիշատակւում է որպէս

119 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

120 Թովմայ Արծրունի եւ Անանուն:

121 Աշոտ Ա-ի եւ Սմբատ Ա-ի օրոք Հայոց թագաւորութիւնն ընդգրկում էր Մեծ Հայքի տարածքի գերակշռող մասը (բացառութեամբ Բարձր Հայք, Ծոփք գաւառների եւ Փոքր Հայքի): Նրա սահմանները ներառում էին հարաւում Կորճայք եւ Աղձնիք նահանգների մեծ մասը, հարաւարեւելքում հասնում էին մինչեւ Ատրպատական, արեւելքում՝ մինչեւ Պարտաւ, արեւմուտքում՝ մինչեւ Ծոփք եւ Բարձր Հայք նահանգները, հիւսիս-արեւմուտքում՝ մինչեւ Եգերաց աշխարհ, հիւսիսում՝ մինչեւ Կովկասեան լեռնաշղթան եւ Ալանաց դուռը (Դարիալի կիրճը) (տե՛ս **Բ. Առաքելեան**, *Հայաստանը Բագրատունեաց ժամանակաշրջանում*, Հայ ժողովրդի պատմութիւն (ՀՀ ԳԱԱ հրատ.), հտ. III, Երեւան, 1976, էջ 28. Լէօ, *Երկեր*, հտ. Բ, Երեւան, 1967, էջ 514-515):

բանակի մեծ միաւոր: Մինչեւ Աշոտ Գ-ի (953-977) ժամանակաշրջանը՝ ռազմական բնագաւառում փոփոխութիւններ չենք նկատում:

Աշոտ Գ-ի կառավարման շրջանը հայոց պետականութեան համակարգում փոփոխութիւնների շրջան էր: Միասնական, կենտրոնացուած պետութիւն ստեղծելու նպատակի իրականութիւն չդառնալու հետեւանքով հայոց պետութիւնը վերածւում է մասնատուած աւատատիրական երկրի: Քաղաքական բնագաւառում այդ փոփոխութիւնը դաշնակցային պետութեան ձեւի կայացումն էր, երբ Բագրատունեաց թագաւորութեան կազմի մէջ մտնում էին արդէն թագաւորութիւն հռչակուած Վասպուրականը, Կարսը, Տաշիր-Զորագետը, Սիւնիքը եւ Հայաստանի տարածքում ստեղծուած աւատատիրական իշխանութիւնները[122]: Այս պետական կազմաւորումները օժտուած էին ներքին ինքնավարութեամբ եւ կենտրոնական իշխանութեան՝ Բագրատունիների հետ կապուած էին դաշնակցային պայմանագրերով:

Քաղաքական մասնատուածութիւնն իր ազդեցութիւնն է ունենում պետութեան ռազմական կառոյցի վրայ: Ենթակայ թագաւորութիւնների առաջացմամբ խորանում է ռազմական մասնատուածութիւնը. առանձին երկրամասերից հաւաքագրուած ռազմական ուժերը ենթարկւում են անմիջականօրէն այդ տարածքների տիրակալներին: Իշխանական տների հզօրացման եւ ենթակայ թագաւորութիւնների առաջացման հետեւանքով իշխանների գնդերի թուաքանակը սկսում է մեծանալ: Ժ դարի վերջին եւ ԺԱ դարի սկզբին հայկական բանակում գումարտակ *տերմինը այլեւս չի յիշատակւում: Բագրատունեաց թագաւորութեան պատմութեան երկրորդ՝ մասնատուածութեան շրջանում գումարտակը, որպէս զինուորական ստորաբաժանում, իր տեղը զիջում է գնդին: Այսպիսով, ռազմական ստորաբաժանումների համակարգում կրկին գերիշխող է դառնում գունդը՝ վերածուելով հայոց բանակի հիմնական ստորաբաժանման:*

122 **Ռ. Մաթեւոսեան**, նշ. աշխ., էջ 264:

© National Library of Armenia